ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԺԱՄԱՆՈՒՄ Է ԿԱՀԻՐԵ

Նոյեմբերի 2-ին, շաբաթ, Եգիպտահայ գաղութը, ազգային-եկեղեցական բոլոր կազմակերպություններն ու հատվածները ներկայացնող շուրջ 3000 հոգուց բաղկացած մի բազմություն, անձկագին հուզումով և համազգային խանդավառությամբ, Եգիպտոսի նորակերտ միջազգային օդանավակայանում, սպասում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր գալստյան։

Վեհափառ Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին դիմավորելու համար օդանավակայան էին եկել թեմական առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Զավեն վարդապետ Ջինչինյանը, հայ ավետարանական համայնքի հոգևոր պետ վերապատվելի Վահան Թուխիկյանը, հայ կաթոլիկ համայնքի կողմից Հ. Գրիգոր Կիրկիրյանը, Ղպտի եկեղեցու պետ Կյուրեղ պատրիարքը, Հույն և Ասորի օրթոդոքս եկեղեցիների և այլ հարանվանությունների եկեղեցականներ և կրոնական ներկայացուցիչներ, Կահիրեի հայոց թեմական ժողովի ատենապետ Գրիգոր Դարբինյանը, Ալեքսանդրիայի հայոց թեմական ժողովի ատենապետ Մարտիկ Զարբհանելյանը, Կահիրեի հայոց քաղաքական ժողովի ատենապետ Օննիկ Մալյանը և երկու թեմական ժողովների և զանազան հոգաբարձությունների անդամներ, ազգային վարժարանների բարձրագույն կարգերի ուսանողությունը՝ իրենց տնօրեններով և ուսուցչական կազմերով, հայ և օտար մամուլի թղթակիցներ, մտավորականներ, հյուրեր։

«Արդարև, անգամ մը ևս փաստվեցավ,— գրում է «Ջանակիր» շաբաթաթերթը,—որ հայ ժողովուրդը գիտե հարգել իր արժեքները, գիտե իր ուժերը և մտածումները միացնել հոն, ուր որ պետք է. փաստվեցավ, որ հայ ժողովուրդը գիտե արժանավայել կերպով ընդունիլ իր առաքելատիպ Վեհափառը»։

Ինքնաթիռը, որով ճամբորդում էր Վեհափառ Հայրապետը, իջնում է օդանավակայան ճիշտ ժամին՝ 3.45-ին։

Առաջնորդ սրբազանը նորին Ս. Օծության մատուցում է ավանդական աղն ու հացը։

Օդանավակայանի դահլիճում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին բարի գալուստ են մաղթում ներկա հայ և օտար համայնքների հոգևոր պետերը, ազգային իշխանության և ամեն խավի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Նորին Ս. Օծությունը, ողջունելով բոլորին, շնորհակալություն է հայտնում ջերմ դիմավորության և ընդունելության համար, օրհնում է եգիպտական հյուրընկալ հողը, նրա բարեխնամ կառավարության անդամներին և Եգիպտոսի ազնիվ, բարի ժողովրդին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՀԻՐԵԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այնուհետև Վեհափառ Հայրապետը օդանավակայանի ընդունելության սրահից, հան-

դիսավորությամբ և ինքնաշարժերի մեծ շարասյունով, առաջնորդվում է դեպի Կահիրեի Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր ևս ժողովրդական խանդավառ բազմությունն անհամբեր սպասում էր Նորին Ս. Օծության ժամանմանը։

Տաճարը լուսավորվել է տոնական օրերի հատուկ շքեղությամբ և լցվել հոծ բազմությամբ։

Զանգերի զվարթ զողանջի ներքո, եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով, Վեհափառ Հայրապետը մուտք է գործում եկեղեցի, ուր պաշտվում է բարի գալստյան մասնավոր արարողություն, «Ուրախ եղէ ևս սաղմոսերգությամբ։

Առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, հանուն Եգիպտոսի հայ թեմի, ողջունում է Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելությունը Կահիրե.

«Աստվածարյա՛լ Հայրապետ,

Եգիպտոսի հայ գաղութը ընդհանրապես և մասնավորապես Կահիրեի Ձեր հոգևոր զավակները, լցված անպատում ուրախությամբ, կողջունեն խաղաղության պատգամաբերիդ օրհնաբեր այցելությունը Իր հոգևոր զավակներուն։

Վեհափա՛ռ Տեր, Ձերդ Ս. Օծության երկրորդ այցը մեզի, նեղոսի այս հյուրընկալ ափերուն, այս անգամ տարբեր իմաստ և տարբեր նշանակություն ունի։

Վեհափա՛ռ Հայրապետ, կուգաք այս անգամ խաղաղության ձիթենին Ձեր ձեռքին և համերաշխության պատգամը Ձեր օրհնյալ շրթներուն վրա և կրսեք Ձեր հոգևոր զավակներուն. «Ողջույն տուք միմեանցս, զի «խաղաղության ձայն հնչեցաւ, սէրն յընդհանուրս սփռեցաւ»։

Յոթը երկար տարիներ անցուցիք տառապանքով, Վեհափառ Հայրապետ, դագար չունեցաք, առանց հուսահատելու՝ սիրո և համերաշխության խոսքը թրթռաց անդադար Ձերդ Ս. Օծության օրհնյալ շրթներուն վրա, հրավիրելով Ձեր հոգևոր զավակները մոռնալ տխուր անցյալը, ձեռք տալ իրարու եղբայրորեն և բոլորվիլ շուրջը աստվածակառույց Ս. Էջմիածնի և լուսավորչահաստատ Հայրապետական Աթոռին, որուն վրա այնքան արժանավորապես կբազմի աստվածարյալ Հայրապետդ։

Սրբազնասո՛ւրբ Հայրապետ, Ձեր հոգևոր զավակներուն աչքերը այժմ Ձեզի են հառած և ամենն ալ անձկագին կսպասեն Վեհափառ Հայրապետիդ հուսադրիչ խոսքերուն, խանդավառվելու և հավատավոր հոգիով փառքը երգելու աստվածակառույց Ս. Էջմիածնի և փառքը լուսավորչահաստատ Հայրապետական Գահին։

Բարի թող ըլլա Ձեր գալուստը, Վեհափա՛ռ Հայրապետ, վարդ ու շուշան թող ծաղկին Ձերդ Սրբության ճամբաներուն վրա, վասն զի Դուք, Վեհափա՛ռ Տեր, խաղաղության պատգամաբեր առաքյալն եք մեզի ամենուս համար։

Բարի՜ եկաք, հազա՜ր բարով, Վեհափա՛ռ Տեր և առաքելատի՛պ Հայրապետ։

Վեհափառ Հայրապետը պատասխանում է առաջնորդ սրբազան հոր բարի գալստյան խոսքերին.

«Մուրը զգացումներով եմ համակված այսօր։ Եվ իրոք, ի՞նչ կա ավելի հուզիչ և մխիթարիչ Հայոց Հայրապետի մը համար, եթե ոչ այս տեսարանը՝ որ անգամ մը ևս պարզվեցավ թե՛ օդանավակայանին մեջ, թե՛ այստեղ, ուր հավատացյալ զավակները եկեղեցիին, այնքան խանդով և երջանիկ բացականչություններով, կդիմավորեն իրենց Հայրապետը։ Մենք փառք կուտանք Աստուծո, որ մեր ազգը, հայ հավատացյալ ժողովուրդը, հայ ժողովուրդը, անցյալի մեջ այնքան չարչարված և նահատակված, ցիրուցան եղած ամբողջ աշխարհի մեջ, բազում դժվարություններու ու նահապարհներու անցած, այսօր, այնուամենայնիվ, ոչ միայն մարմնով և հոգվով ամբողջ է և կենդանի, այլ նաև նվիրված է այն սուրբ գաղափարներուն, այն սուրբ իդեալներուն, որոնք միշտ հայ ժողովուրդը ոգեշնչեր են դարերե ի վեր, Ս. Գրիգոր Լուսավորչի օրեն մինչև մեր ժամանակները։ Նույն սուրբ հավատքը քրիստոնեական մեզ կոգեշնչե և մեզ կմիացնե, մեզի հոգեկան կենդանություն կպարգևե և մեզ կառաջնորդե դեպի նորանոր վեհ գործեր, հոգեկան և բարոյական և ազգային իմաստ ունեցող գործեր, որոնք կերաշխավորեն այս աշխարհի վրա մեր եկեղեցիին և մեր ժողովուրդին հավատական կյանքը։

Այս սուրբ զգացումներով լեցուն, այս առաջին իսկ վայրկյանին, կուզենք ձեզի ողջո՛ւյն և հայրապետական օրհնությո՛ւն բերել ամենայն հայոց Մայր Աթոռ աստվածակառույց Ս. Էջմիածնեն և մեր վերածնած Հայրենիքեն և մեր քույրերեն ու եղբայրներեն, որ ի Հայաստան աշխարհ։

Մենք Մեր աղոթքը կբարձրացնենք առ Աստված, որ այս մեծ և փառավոր երկիրը՝ Եգիպտոս, ապրի, անի և միշտ բարձրանա խաղաղ և արևոտ ու երջանիկ օրերով և հասնի իր ժողովուրդին՝ եգիպտական արաբ ժողովուրդին շինարար իդեալներուն իրականացման։

Մենք կաղոթենք առ Աստված նաև, որպեսզի ամբողջ աշխարհի մեջ տիրե տևական խաղաղություն և բարեկամություն բոլոր ազգերու և պետություններու միջև, որպեսզի այլևս

այս աշխարհը ավերածություններ և տառապանք, մահ և արտասուք չտեսնի երբեք:

Ուժ և կարողություն կմաղթենք բոլոր այն պետական դեկավարներուն, որ այսօր կմտածեն ու կգործեն խաղաղության և բարեկամության համար, ժողովուրդներու միջև համերաշխ գործակցության ոգիով: Այս ճանապարհն է երջանկության ճանապարհը բոլոր ազգերու և բոլոր մարդոց»:

Եկեղեցական արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը բարձրանում է առաջնորդարան, որտեղ «Շնորհալի» երգչախումբը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կատարում է «Տէր, կեցո զու զհայս» մաղթերգը և Հայրապետական մաղթանքը՝ «Ամեն հայի սրտից բխած»:

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Հյուրասիրությունից և աջահամբույրից հետո, Վեհափառ Հայրապետը, երեկոյան ժամը 7-ին, առաջնորդվում է Սեմիրամիս հյուրանոցը, ուր Նորին Ս. Օծության հատկացվում է մասնավոր հարկաբաժին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՋԱՐՈՋ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 3-ին, կիրակի, *Վեհափառ Հայրապետը Կահիրեի Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում սուրբ պատարագ է մատուցում և քարոզում:*

Ժամը 10-ին, առաջնորդարանում զգեստավորված, ամպհովանու տակ և եկեղեցական թափորով, պատարագիչ Վեհափառ Հայրապետը մուտք է գործում եկեղեցի, հավատացյալ հոծ բազմության հուզումնալից հայացքների և աղոթքների մրմունջների ներքո:

«Շնորհալի» երգչախումբը, երաժշտապետ պր. Եղվարդ Հակոբյանի ճարտար ղեկավարությամբ, կատարում է պատարագի եկմալյան քառաձայն երգեցողությունը:

Հայրապետական պատարագի ժամանակ, Ս. Սեղանին սպասարկում են հոգեշնորհ Տ. Զավեն և Տ. Արսեն վարդապետները, քահանայից դասը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը.

«Ի վերայ Աջոյն և Էջմիածնի, ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, անվասիկ Մեզ վերստին միատեղ կգտնվեն այս սուրբ եկեղեցվո կամարներուն ներքև, սուրբ և անմահ պատարագի պահուն: Սուրբ և անմահ պատարագ, աղոթքի պահ, ինչքա՜ն քաղցր հուզումներ և կենարար ու սրբարար զգացումներ կհորդեն մեր սրտերեն: Բարեպաշտ հոգիի մը համար գուցե հոգեկան մխիթարության և ներքին խաղաղության գերագույն պահն է սուրբ պատարագի պահը, երբ մեր հոգիները իսկապես կվերանան, կթռչտին մեր վրայեն և մեր սրտերուն մեջեն այն ալեկոծումները և այն խռովքները, որոնք առնասարակ կհուզեն մեր հոգիները և մեզի կդառնանք ավելի մարդկային, ավելի մտքոր, ավելի բարի, որովհետև կմոտենանք Աստուծո: Ինչքան հաջողինք մոտենալ Աստուծո, այնքան կդառնանք ավելի մարդկային: Մեզի կաղոթենք առ Աստված, որ մեր այս լույս հավատքը միշտ պայծառ մնա մեր կյանքին մեջ, մեր անհատական թե հավաքական կյանքին մեջ, մեր ամբողջ եկեղեցիին մեջ, որպեսզի հայ ժողովուրդի գավակները առավել պատրաստ ըլլան բարի և առաքինի գործեր կատարելու իրենց կյանքի ընթացքին, որպեսզի առավել շինարար կյանք մը ապրին, բառին ոգեկան և բարոյական իմաստով մանավանդ, և որպեսզի անոնք սիրեն մեկը մյուսը և մնան մեկ և անբաժան:

Այս սուրբ և անմահ պատարագի պահուն, բանանք մեր հոգիները և ընդունինք երկնային շնորհները մեր մեջ:

Սիրելի՛ հավատացյալներ, այս աղոթքի սուրբ պահուն, Մեր մտածումը մանավանդ կուղղվի դեպի մեր Ս. եկեղեցին և դեպի անոր աստվածակառույց կեդրոնը, դեպի Սայր Աթոռ Ս. Էջմիածին:

Մենք ճիշտցինք մեր ամենահարգելի պատմագիրներեն մեկուն՝ Առաքել Դավրիժեցիի խոսքը, թե «Ի վերայ Աջոյն և Էջմիածնի, ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Պատմիչը, դարերու փորձառության վրա հենց, կպատգամեր, թե ամբողջ հայ ժողովուրդը կա և կմնա միավորված Ս. Լուսավորչի Աջի և Ս. Էջմիածնի զորությամբ: Այս աղոթքի պահուն, Մենք կուզենք Մեր խնդրանքն ու աղերսը բարձրացնել դեպի երկինք, որպեսզի նաև այսուհետև և հավիտյան, մեր ժողովուրդը մնա իսկապես կապյալ՝ մեկ, անբաժանելի և անսասան, Ս. Գրիգոր Լուսավորչի լույս հավատքի վեմին վրա և Ս. Էջմիածնի աստվածային օրհնության ներքև: Մեր պատմության այս բախտորոշ շրջանին, երբ մեր ժողովուրդի կեսը ցրված կապրի ի սփյուռս աշխարհի, պետք է գիտենանք գնահատել այն ճշմարտությունը, որ մեզի կուգա դարերու խորեն և զոր այնքան վճիռ ու եռմարիտ կերպով կրանաձևի հայրենասեր և եկեղեցանվեր պատմագիր՝ Առաքել Դավրիժեցի:

Իրեն Ամենայն Հայոց Հայրապետ, Մեր սրբազան և սեպուճ առաքելությունը կնկատենք այս ճշմարտությունը բարձր ճնշեցնել ամեն տեղ, ուր Մեր ձայնը կհասնի: Մենք և մեր մյուս նվիրապետական Աթոռները և մեր

ոլոր հոգևորական եղբայրները այս զգացումներով տոգորված ենք այս պահուս:

Եվ փա՜ռք Տիրոջը, որ հետգնետ մեր ազգի պայմանները այնպես կդասավորվին, որ մենք առավել հաջողությամբ կարենանք ընթանալ այս նահապարհին վրայնեն դեպի առաջ:

Նախ Մենք, մեր Մայր Հայրենիքի սահմաններեն ներս, Ս. Էջմիածնի օրհնությամբ և առաջնորդությամբ, բավական գործ կատարեցինք, Մեր գործակիցներուն հետ միասին: Փույլ տվեք վկայել ձեզի, թե այս յոթը-ութը տարիներուն ընթացքին, մեր Ս. Եկեղեցին սառավել զորացավ, առավել կազմակերպվեցավ և մեր հավատացյալ ժողովուրդը, Հայաստանեն ներս և դրացի հանրապետություններուն մեջ, առավել սկսավ ապրիլ հոգևոր կազմակերպված կյանք մը, մեր եկեղեցիներուն կամարներուն ներքև: Մեր բոլոր գործունեությանց կեդրոնը, անշուշտ, Ս. Էջմիածինն է, ուրկե կհառագայթե մեր հավատքի լույսը, և մեր հոգևոր կյանքի ակունքը դեպի մեր բոլոր ներքին թեմերը, եկեղեցիները և հավատացյալները: Մանավանդ Ս. Էջմիածինը գրեթե անհանգիստ դարձած է այսօր իր շքեղության, իր պայծառության մեջ. բոլոր անոնք, որոնք վերջին տարիներուն բախտը ունեցած են Մայր Հայրենիք այցելելու և գալու նաև ուխտի Ս. Էջմիածին, կխոստովանին, թե իրենց աչքերով տեսած են այս բոլորը և պիտի տեսնեն բոլոր անոնք, որ կուգան. և անսահման է մեր հավատացյալ ժողովուրդին ուրախությունը, ի տես Ս. Էջմիածնի վերածնունդին:

Ճշմարիտ կըսենք ձեզի, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, մանավանդ տոնական օրերուն այնտեղ պետք է ըլլալ և անձամբ տեսնել գյուղերեն, սարերեն և ձորերեն գունդագունդ եկած մեր հավատացյալները Ս. Էջմիածնի շրջափակին մեջ և Տաճարեն ներս, որպեսզի կարենաք իրոք չափել, զգալ այն խորունկ և անփոխարինելի հոգևոր զորությունը, որ կբխի Փրկչի Իշխան տեղեն և կբաշխվի հավատացյալներուն:

Մենք հստակորեն կտեսնենք այս բոլորը նաև Մեր հանապարհորդություններուն ընթացքին, թե՛ Հայաստանի մեջ, թե՛ Վրաստան, թե՛ Ադրբեջան, ուր, ինչպես գիտեք, հայկական հոծ բազմություններ կապրին, և Հյուսիսային Կովկաս: Եվ նույնը կտեսնենք այստեղ, ձեր մոտ, ինչպես Ամերիկայի մեջ, կամ երկու տարի առաջ, երբ Պոլիս այցելեցինք: Ամբողջ ժողովուրդը, մեկ սիրտ մեկ հոգի, մեկ մարդու նման փոթորկած զգացումներով, ալեկոծյալ վիճակի մեջ, արցունքով և մաղթանքներով կդիմավորեին Մեզ, անսահման ցնծությամբ և ուրախության բացագանչություններով: Այս բոլորը ի՞նչ կնշանակեն, երբ ոչ այն, որ մեր հավատացյալ ժողովուրդը կենդանի է իբրև քրիստոնյա ժողովուրդ, նույն հավատով վառված է նաև այսօր և կդավանի մեկ եկեղեցի և մեկ ազգ՝ իբրև սկզբունք, կպաշտե մեր հավատքի վեմ և լույսի աղբյուր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Այս մեր ժողովուրդին համար բացառիկ հոգևոր վիճակ մըն է: Գուցե քիչ գտնվին աշխարհի վրա մեզի նման փոքր, մեզի նման անցյալին մեջ հալածված և մեզի նման սփռված ժողովուրդներ, որ այնքան ջերմությամբ և սիրով փարած ըլլան իրենց քրիստոնեական հավատքին, իրենց հավատքի կեդրոն Ս. Էջմիածնին և իրենց հայրենի երկրին:

Մենք պետք է աղոթենք, որ այս հոգևոր վիճակը մնա ամուր և անսասանելի, որովհետև մանավանդ անով է որ պիտի ապրինք, պիտի տոկանք տակավին և պետք է տոկանք տակավին, մինչև որ մեր ժողովուրդի և մեր Եկեղեցվո բոլոր ազնիվ իդեալները իրականանան և կարողանանք մեր ամբողջ ազգը համախմբել Մեր հովանիին տակ, Մայր Հայրենիքի սուրբ հողին վրա:

Բայց, մինչև այդ, մենք իրատես պետք է ըլլանք և գիտենանք կազմակերպել նաև մեր եկեղեցական կյանքը Սփյուռքի մեջ, որպեսզի մեր զգացումները կաղապարվին, մեր մտածումները ուժ դառնան, և մեր Եկեղեցին մնա կենդանի իր ժողովուրդով, և ո՛չ մեկ հայ, ո՛չ մեկը մեկը Մեր զավակներեն, չտկարանա իր հավատքին մեջ, իր հայկական և հայրենական զգացումներուն մեջ և չհեռանա մեզմե, Սփյուռքի պայմաններուն տակ:

Այս նվիրական նպատակը իրագործելու հանապարհին վրա, բախտորոշ և պատմական դեր ունին նաև մեր նվիրապետական մյուս Աթոռները, որոնք կգտնվին արտասահմանի մեջ: Նախ և առաջ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, որ պատմական աթոռ մըն է մեզի ժառանգ մնացած, և որուն գոյությունը պետք է օգտագործեն Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը՝ իրենց ընդհանուր վեհ նպատակներուն իրագործման համբուն վրա, անոր կողքին և անոր հետ միասին Երուսաղեմի Ս. Աթոռը, որ նույնպես պատմական կազմակերպություն է իբրև եկեղեցի, իբրև Պատրիարքություն և իբրև նվիրապետական Աթոռ, և վերջապես Կոստանդնուպոլսո պատրիարքությունը, որուն գործունեության շրջանը, այսօրվան պայմաններուն մեջ, սահմանափակված է միայն Թուրքիո մեջ: Բայց ամեն մեկը իր տեղեն, ամեն մեկը իր միջոցներով, իր ուժերով, բայց բոլորը մեկ, եղբայրացած, միասնական ճիգերով, հայ ժողովուրդին և անոր սուրբ իղձերու իրականաց-

ման ծառայելու ուխտով. պետք է աշխատին ձեռք-ձեռքի ված։ Աստ ա՛յս եշմարտությունների լույսին ներքև է, որ առավել կայծառանա բուն իմաստը Երուսաղեմի Սեր ողջագուրումին՝ շնորհազարդ խոսքեն Ա կաթողիկոսին ճետ։

Կմաղթենք նաև, սիրելի՛ նավատացյալներ, որ նույն ոգիով ապրիք, աշխատիք և կազմակերպեք ձեր եկեղեցական կյանքը. ձեր ճոգեոր և ազգային կյանքը Նեղոսի այս նյուրընկալ ափերուն։ Եվ վստաճ եղեք, թե ոչ միայն Սեր օրենությունը, այլ նաև Աստուծո օրենությունը ձեզի ճետ պիտի ըլլա։ Կմաղթենք, որ սիրով, խաղաղությամբ այդ աշխատանքը սկսիք և այլևս երբեք չշեղիք այդ ճամբայեն։ Կմաղթենք, որ այս սուրբ տաճարը միշտ այսպես շեն ու պայծառ մնա, լեցուն ճավատացյալ ժողովուրդի գավակներով։ Կմաղթենք ամենուդ՝ նաև բարի և առաքինի գործոց ճաջողություն։ Կմաղթենք ձեզի բաջառողջություն, առեշտաս, երկար օրեր, և սեր և խաղաղություն նաև ձեր տուներուն և ձեր սրտերուն մեջ,

«Շնորճք, սեր և խաղաղութիւն և աստուածային սրբարար զօրութիւն եղիցին ընդ ձեզ յաւիտեանս»։

Ամէն»։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, նույն հանդիսավորությամբ, առաջնորդվում է դահլիճ, ուր տեղի է ունենում հյուրասիրություն և աջահամբույր Իր այցելության ուրախ առիթով։ Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցուն նվիրում է մի խաչքար։

Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը, առաջնորդ սրբազանի, Իր շքախմբի և ազգային իշխանության ներկայացուցիչների ուղեկցությամբ, գնում է Հանրապետության պալատ՝ հյուրերի այցելության տոմարում (քուպպե) ստորագրելու։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունում է մի շարք ազգայինների այցելությունները

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 4-ին, երեքշաբթի, *առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, բարեհաճում է ընդունել մի շարք թղթակիցների և պատասխանել նրանց հարցերին։*

Այնուհետև Նորին Ս. Օծությունը, նոյեմբերի 4-ից սկսած, բարեհաճում է այցելել Կահիրեի ազգային-մշակութային հաստատություններն ու սրահները, անձամբ տանելու հայրական Իր օրհնություններն ու ողջույնները և Իր հարգալից խրատականներով, պատգամներով ոգևորելու հայրենակարոտ Իր զավակներին, հայ մշակույթի գաստիարակության անխոնջ մշակներին և Եգիպտոսի հյուրընկալ հողի վրա հասակ առած հայ նոր սերնդին։

Հայրապետական առաջին օրհնությունը ընդունող կրթական հարկը լինում է Գալբստյան ազգային վարժարանի մանկապարտեզը։

Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 11-ին, այցելում է Շուբրայի մանկապարտեզը, ուր դեռափթիթ մանուկների թոթովանքով, բայց համարձակ արտասանություններն ու երգերը ունկնդրելուց հետո, հայրական Իր օրհնություններն է տալիս նրանց և որպես հիշատակ՝ Ս. Էջմիածնից բերված ոսկեզոծ խաչեր է բաժանում աշակերտության և ուսուցչական կազմին։

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով և առաջնորդ սրբազանի ուղեկցությամբ, այցելում է Գալուստյան վարժարան, ուր ընդունվում է բարձրագույն նախակրթարանի աշակերտության, ուսուցչական կազմի և տնօրինուհի տիկին Իսկուհի Տատրյանի, դպրոցի հոգաբարձության, տիկնանց խնամակալության անդամների կողմից՝ «Կեցցե Վեհափառ Հայրապետը» սրտաբուխ բացականչություններով և սիրո ու երախտագիտության վառ ցույցերով։

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տեղի է ունենում փոքր հանդիսություն, աշակերտական ուժերով։ Հանդիսության բացումը կատարում է տեսչուհի տիկին Իսկուհի Տատրյանը, սրտառուչ մի ուղերձով ողջունելով Նորին Ս. Օծության այցելությունը կրթական այս հարկից ներս, և շեշտում օրվան պատմական նշանակությունը։

«Վեհափառ Հայրապետը զորովանքով կդիտեր աշակերտական շարքերը և անշուշտ գոհունակությամբ կունկնդրեր վարժարանի և հայրենաբաղձ պատանիներու արտասանությունները, երգերն ու ուղերձները» («Արև», 8 նոյեմբերի)։

Հանդեսի վերջավորության, խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետը և Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի աշակերտության ողջույնները հաղորդելուց հետո, խոսում է հայ մշակույթի—դպրոց, լեզու, եկեղեցի—կատարած դերի մասին, ազգապահպանման նվիրական գործում։

Հանդիսության ավարտին, Գալուստյան վարժարանում ընդունված սովորության համաձայն, Վեհափառ Հայրապետը, Իր պատմական այցելության առթիվ, դպրոցի բակում տնկում է հիշատակի մի ծառ։

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը և հյուրերը առաջնորդվում են սեղանատուն, ուր Նորին Ս. Օծությունը բարեհաճում է ճաշել

Վեհափառ Հայրապետը Հելիոպոլսի Մերճանյան մանկապարտեզում

աշակերտների հետ և ապա այցելում վարժարանի դանազան հարկաբաժինները։

Վեհափառ Հայրապետը, Գալուստյան ազգային վարժարանից հրաժեշտ առնելու պահին, վարժարանի հուշամատյանում գրում է.

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Գալուստյան ազգային վարժարանին, տնօրինության, դասախոսական կազմին, ճոգաբարձության և աշակերտության։

Աստված միշտ անսասան ու շեն պահե այս կրթական հաստատությունը»։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ

Նոյեմբերի 4-ին, Երկուշաբթի, երեկոյան ժամը 9-ին, Հայ գեղարվեստասիրաց միությունը իր սրահում, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպում է գրական երեկույթ և ապա ընդունելություն։

Հանդիսության բացումը կատարում է ատենապետ պր. Վահագն Տեփոյանը, սրտագին մի ուղերձով ողջունելով Վեհափառ Հայրապետի ներկայությունը Հայ գեղարվեստասիրաց միության մշակութային հարկի տակ։

Ապա գործադրության է դրվում գեղարվեստական պատշաճ մի հայտագիր, արտասանություններից ու մեներգերից բաղկացած։

Նանոթ ծաղրանկարիչ և արվեստագետ Ալեքսանդր Սարուխանն ասում է։

«Վեհափա՛ռ Տեր.

Ձեր այցելությունը Սփյուռքի հայության առաքելություն մըն է, առաքյալ բառին քրիստոնեական, իսկական առումով։ Որովհետև, Դուք Ձեր հետ կբերեք խաղաղության և միասնականության այն մթնոլորտը, որուն այնքան կարոտը ուներ Սփյուռքը։ Ենորհիվ մեզ հյուրընկալող երկիրներուն մեզ պարգեւված ամեն ազատության, մենք կվայելենք ամեն կարգի բարիք, կրոնական, մշակութային թե ազգային տեսակետով։ Գիտենք, թե Սփյուռքի հայության գլխուն վերև դամոկլյան սուր մը կախված է՝ ուծացումի վտանգը։ Այդ սուրը մենք մեր սեփական ճիգերով և աշխատանքով պետք է վանենք։ Բայց այս գործ մըն է, որ կկարոտի ամենեն հետին հայուն ճիգին, բոլորիս ջիղերուն կորովի պրկումին։

Ահա, թե ինչո՞ւ համար մեր սեեռուն նպատակը եղած է գաղութին մեջ տեսնել միասնականություն։

Երկու մարզ կընդգրկե միասնականությունը՝ կրոնական և հայրենական։ Մին առանց մյուսի թերի պիտի ըլլար։ Մեծ գոհունակությամբ տեղեկացանք, թե շնորհիվ Ձեր ցուցաբերած լայնախոհ և իմաստուն ոգիին,

կրոնական մարդին մեջ գեթ, այդ միասնությունը ձեռք բերված է։ Վստահ ենք, թե այդ ոգին պիտի ըմբռնվի իսկական իմաստով և կիրարկվի ամենայն անկեղծությամբ։

Կհուսանք, նաև, որ կրոնական մարդին մեջ գոյացած միասնականությունը նախաքայլ մը ըլլա, որ տանի մեզ դեպի մյուսը՝ հայրենականը։ Այն ժամանակ է, որ գաղութները բաժնող մղձավանջը պիտի փարատի, և արտասահմանի հայությունը իր ամբողջ ուժն ու կորովը պիտի գործածե մեկ բանի՝ պայքար մեզի սպառնացող վտանգի դեմ։ Ավելին, տանիլ պայքարը՝ ձեռք բերելու համար մեր դարավոր և նվիրական իրավունքները, մեզմե խլված հողերուն վերադարձը, որ մասնավորապես կհետաքրքրե սփյուռքահայությունը, որուն համար ամենքս պետք է ներկայանանք միաձույլ և անխորտակելի ճակատով՝ աշխարհի դատարաններուն առջև։

Ջրհեղեղեն վերջն ալ, Արարատի գագաթեն աղավնի մը թռավ դեպի հեռավոր երկիրները և վերադարձավ ձիթենիի ճյուղը կտուցին՝ ավետելու համար վտանգին փարատումը։

Պիտի մաղթենք, որ օր մը վերադառնաք Արարատ, Ձեր ձեռքին մեջ, փոխանակ մեկի՝ ձիթենիի զույգ ճյուղերով։

Վեհափառ Հայրապետին ողջունում է նաև Հ. Գարայանը, հետևյալ ուղերձով.

«Ձե՛րդ Ս. Օծություն, Վեհափա՛ռ Հայրապետ.

Ձեր հեզահամբույր բարությունը չարաչար գործածելով, այսօր բոլորս բախտն ու պատիվը ունինք Ձեր օրհնաբեր ներկայությունը վայելելու այս մշակութային տան մեջ։

Շնորհակալ ենք և երախտապարտ, Վեհափա՛ռ Հայրապետ, որ մեր Տիրոջ հանգունակ Ձեր խոնարհությունը այնքան առաջ տարիք, որ մեզ քաջալերելու և գոտեպնդելու համար մեր ազգապահպանության պայքարին մեջ, Դուք դեպի մեզի եկաք և չսպասեցիք, որ մենք ծնկաչոք մեր հարգանքը մատուցանելու գանք Ձեզի։

Կրկին ու կրկին անգամ երախտապարտ ու շնորհակալ ենք Ձեզի, Վեհափա՛ռ Տեր, սրբությամբ օծուն Ձեր խոնարհության և բարության համար։

Ձեզի համար ըսին, Վեհափա՛ռ Հայրապետ, թե Դուք լույսի մարդն եք։

Ներեցեք, որ ես ալ ավելցնեմ, թե Դուք բարության մարդն եք։

Արդարև, կտեսնենք այսօր, որ բարության նույն սրբազան զգացումով է, որ կմոտենաք մեր եկեղեցական ու ազգային ամենացավագին տաղնապին, զայն լուծելու և հարթելու հաստատ հավատքով և լավատեսությամբ։

Մենք, Վեհափա՛ռ Հայրապետ, որ միշտ Ս. Էջմիածնի կողքին կանգնած ենք անխոով հավատքով, զմայլանքով ու հիացումով կհետևինք Ձեր ճիգերուն, որովհետև գիտենք, թե ճշմարիտին և գեղեցիկին լավագույն ձանաչումը՝ բարիին գործադրության մեջ կկայանա։

Հանդիսության ընթացքում խոսք է առնում նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։

Այնուհետև, ընդհանուր ծափերի մեջ, խանդավառ մթնոլորտում, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՛ ունկնդիրներ.

Այժմ Մեզի համար շատ մեծ հոգեկան մխիթարություն մը է այցելել նաև այս քաղաքի մշակութային տաճարները։ Մենք կգնահատենք արտասահմանի մեջ այս աշխատանքը, որ կծավալի նաև մշակութային կյանքի ոլորտությամբ։

Մենք սովոր ենք միշտ, առաջին հերթին հիշելու եկեղեցին, և աեռոր կոդին դպրոցը, բայց անշուշտ նաև այս մշակութային ակումբները անոնց շարունակությունը կհանդիսանան՝ մեր ժողովուրդի հավատական կյանքին համար։

Մեր ժողովուրդը հայտնի է հինեն ի վեր իբրև մշակույթ կերտող ժողովուրդ, ոչ միայն մշակույթ սիրող, ոչ միայն մշակույթի արժեքներ յուրացնող և մշակույթի արժեքներ դավանող, այլ նաև մշակույթ ստեղծող ժողովուրդ։ Եվ այն ժողովուրդները, որոնք մշակույթ ստեղծել գիտցած են պատմության ընթացքին, անոնք անշուշտ որ ավելի զոյատեված են և ավելի փառավոր լույսի մը ներքև հանդես կուգան պատմության բեմին վրա։ Սենք, մեր կրոնական հավատքին նեռ մեկտեղ, միշտ ջանակիրները եղած ենք մշակույթի արժեքներուն ու նույնիսկ մեր կրոնքը, մեր քրիստոնեական հավատքը դարերու ընթացքին պայծառացած է և փառավորված է մշակութային արժեքներով։ Հայ ժողովուրդը սովորական իմաստով քրիստոնյա ժողովուրդ մը չէ, քրիստոնեությունը այնքան խորապես յուրացած է ան իբրև հոգեկան ապրում, որ ան դարձած է ստեղծարար նոր գործոն։

Նախ մեր լեզուն, մեր հին գրաբար լեզուն և անով հորինված գեղարվեստական երկերը, թարգմանություններեն սկսյալ, մեր գրական նոր լեզուն և բանաստեղծական գրական նոր գլուխ-գործոցները, մեր ժողովուրդին բացառիկ տեղ մը կուտան մարդկության մեջ։ Հետո, մշակութային մեր մյուս մեծ արժեքը, որ Մենք կգտնենք համազոր մեր լեզվին, մեր գրականության և մեր բանաստեղծության, այդ մեր հայկական ճարտարապետությունն է, որ նույնպես եկեղեցիին միջոցով ծնավ և կազմավորվեցավ։

Ճիշտ է, հայ հարտարապետները, գիտանորեն ուսումնասիրելով հայկական հարտարապետական ոճը, կհաստատեն, թե անոր հիմքերը մինչև ուրարտական շրջանը կերթան: Մենք չենք ժխտեր անշուշտ այդ, բայց կասենք է հաստատենք նաև, թե մանավանդ քրիստոնեական շրջանին, մանավանդ ի դարձեն այս կողմ, յոթներորդ դարուն և հետագա դարերուն, հայ հարտարապետությունը ի հայտ եկավ իր գեղեցկագույն ձևերուն մեջ: Այդ է բուն հայկական հարտարապետական ոճը, որ մեր ժողովուրդի փառքի տիտղոսներեն մեկը կհանդիսանա աշխարհի վրա:

Մեր անձնական կարծիքով զոնե, մշակութային այս երկու մեծ արժեքները՝ հայ լեզուն ու գրականությունը և հայ հարտարապետությունը, կհանդիսանան այն երկու մեծ սյուները, որոնց վրա կենենու հայկական ոգեկանությունը: Մեր մյուս գեղարվեստական աղգային արժեքներն ալ, ինչպիսիներն են մանրանկարչությունը, երաժշտությունը և քանդակագործությունը, անշուշտ որ պետք չէ մոռացության տանք: Բայց կկարծենք, որ առաջին երկուքը կմնան առավելապես և ամբողջապես հայկական:

Ասված է, ճիշտ կերպով կկարծենք, թե չկան ազգեր այս աշխարհի վրա, այլ կան մշակույթներ, այն իմաստով անշուշտ, որ մշակույթ կերտող և մշակույթ պահպանող ժողովուրդներն են, որոնք կարողացած են գոյատևել, և իրենց ուրույն դիմագծությունը, իրենց ոգեկանությունը պահպանել:

Այս իմաստով, կխոհինք, թե մեր ժողովուրդը ապացույց մըն է այս խոսքի ճշմարտության: Եվ մեր հավատքով և մեր մշակույթով պիտի կարողանանք տոկալ նաև ապագային:

Կխոհինք, թե ժողովուրդի մը կամ ժողովուրդներու գոյատևման համար ամենազորավոր գենը հավատքն է և ազգային մշակույթը: Ոչ համրանքը, ոչ ֆիզիկական ուժը, ոչ քաղաքական հզորությունը, ոչ նյութական գենքերը, ոչ ալ ոսկին, այնքան հշմարիտ և տևական ուժ և արժեք չեն ներկայացներ ժողովուրդներու կյանքին մեջ, որքան այդ ժողովուրդներու հոգեկան արժեքները, անոնց մշակույթը:

Հազարամյակներու վրա դիտեցեք պատմությունը, և պիտի տեսնեք ճշմարտությունը այս խոհերդածություններուն:

Ահա՛ մեր գոյության ճշմարիտ գաղտնիքը, մեր տոկալու, տևելու և հավիտյան ապրելու գաղտնիքը: Հայ ժողովուրդը, Մենք վստահ ենք, միշտ պիտի ապրի:

Այսօր առավել լավատես ենք բնականաբար, որովհետև, մեր փոքրիկ Հայաստանի հողամասին վրա, մեր ժողովուրդը ոչ միայն ֆիզիկապես, արդեն երկու միլիոն համրանքով, կապրի, կգարգացնե իր տնտեսությունը, կշինե, կշենցնե իր քաղաքները, և նորագույն տեխնիկ պայմաններ կստեղծե ապագա առավել երջանիկ կյանքի մը համար, այլ, ինչ որ ավելի կարևոր է Մեր կարծիքով, այդ փոքրիկ Հայաստանի մեջ, ավելի կամրապնդվին և կզորանան հայկական մշակույթի հիմքերը: Մենք չենք ուզեր շատ երկարել խոսքը. դուք գիտեք այնքան անուններ, և այնքան մեծ գործեր կստեղծվին Հայաստանի մեջ գրականության, երաժշտության, նկարչության, նարտարապետության, քանդակագործության մեջ, որոնք այսօր արդեն շատոնց անցած են ոչ միայն Հայաստանի սահմաններեն, այլ նաև հորիզոնային Միության սահմաններեն ալ դուրս, և դարձած են ամբողջ մարդկության սեփականություն, իբրև հայ ժողովուրդի մասնակցությունը համաշխարհային մշակույթին:

Կկարծենք՝, թե այս իրողությունը ոչ միայն պիտի ուրախացնե և պիտի մխիթարե մեզ և նպարտ պիտի դարձնե իբրև հայ ժողովուրդի զավակներ, այլ մեզ պետք է ներշնչե ապառնվության և ստուգության զգացումը, թե հայ ժողովուրդը միշտ պիտի ապրի՝ քաղաքակրթության, մշակույթի ջանը իր ձեռքին վրա պահած:

Մաղթելի ու ցանկալի է, որ Սփյուռքի նոր սերունդը բանա իր հոգին Հայաստանի մշակութային արժեքներուն առաջ, որովհետև այդ արժեքները հայ կյանքի և լույսի աղբյուրներ են ստուգապես:

Մենք կամաց-կամաց պիտի համախմբվինք հայրենիքին մեջ, բայց երկար ժամանակ պիտի առնե ազգաճավքը: Մինչ այդ, պետք է կազմակերպված մնա հայ Սփյուռքը, շեն մնան եկեղեցիներն ու հայ դպրոցները և հայ մշակութային ակումբները, որպեսզի նոր սերունդները շարունակեն իրենց հոգիները կազմավորել, ամրացնել և լուսավորել՝ հայ ազգային մշակույթի արժեքներով:

Մեր նախնիքներեն ժառանգած ենք սերը դեպի Մայր երկիրը և եկեղեցին: Մեր ժողովուրդը մեկ է իր մշակույթով, իր եկեղեցիով և հայրենիքով: Պետք է միշտ վառ պահել այդ գիտակցությունը մեր մեջ: Ա՛յդ է մեր միակ ուժը:

Մեր գնահատանքի խոսքը և օրհնությունը կբերենք այս սրահի հիմնադիրներուն և այսօրվան աշխատողներուն, որոնց կմաղթենք ուժ և կարողություն: Ամէն»:

Վեհափառ Հայրապետը, իր խոսքի վերջավորության, հանդիսավոր խրատության մեջ և ներկաների բուռն ծափահարությունների ներքո, պր. Էժեն Փափազյանին է հանձնում Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ադամանդա-

կուռ շքանշանի կոնդակը, ջերմորեն շնորհավորելով հոբելյարի ազգային-մշակութային բեղուն գործունեությունը։

Հայրապետական կոնդակի ընթերցումը ունկնդրվում է հոտնկայս։

Կոնդակի տվյալությունից հետո, պր. Էմեն Փափազյանը խոսք առնելով, իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնում Նորին Ս. Օծության՝ իրեն ընծայված հայրապետական սույն ուշադրության և պատվի համար։

Այնուհետև Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է ճաշկերույթ, որն անցնում է հայաբույր և հայրենաբաղձ մթնոլորտում։

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր Մեր»-ով։

Նոյեմբերի 5-ին, երեքշաբթի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը *կահիրեից Անթիլիաս, Մեծի Տան Կիլիկիո նստեն Ա Կաթողիկոսին ուղարկում է նոյեմբեր 5 թվակիր հետևյալ պաշտոնական գրությունը, ներփակելով նաև նոյեմբեր 1 թվակիր իր շրջաբերական նամակի պատճենը, որն ուղարկվել էր Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Աթոռներին ու էջմիածնի թեմերին և հոգևոր հովվություններին.*

«Սիրելի՛ նորայր Մեր.

Մեր ողջագուրումի քաղցր ճուզումի ջերմությամբ, Ձեզի կուղղենք սույն Մեր գիրը այն վստահությամբ, թե վերադառնալե հետո Ձեր Աթոռը, նոր կորովով և նոր լավատեսությամբ վերսկսած եք Ձեր աշխատանքները՝ նվիրված մեր նկեղեցիին և ազգին։

Իրև անմիջական հետևանք Մեր Երուսաղեմ այցելության և Ձերդ Սրբության հետ Մեր տեսակցությանց, Մենք հարմար նկատեցինք գրի առնել հաղորդագրություն մը և մամուլին հանձնել Մայր Աթոռի դիվանի առնչով։ Ներփակ Ձեզի կուղարկենք օրինակ մը ի գիտություն։

Եվ որպեսզի Մեր Աթոռներու միջև սիրո և համերաշխ գործակցության այն ոգին, որուն սկիզբը դրինք Մենք երկուքս, հայտնի դառնա մեր բոլոր Աթոռներուն և մեր բոլոր թեմերուն, Մենք շրջաբերական գրություն մը հղեցինք Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո գահակալ Մեր եղբայրներուն և մեր թեմական առաջնորդներուն, որպեսզի այդ նույն ոգին հետզհետե տարածվի և խորանա մեր եկեղեցական կյանքին ներս ամեն տեղ և բոլորի սրտերուն մեջ։

Ներփակեմ պատճենը Մեր շրջաբերական նամակին։

Եվ վստահ ենք, թե նույն ոգին պիտի ուզեմ տարածել նաև Ձեր թեմերին ներս, Ձեր հոգևորականության և ժողովրդյան սրտերուն մեջ, որպեսզի մեր ողջագուրումը դառնա իրապես համազգային հաստատության և ուրախության առիթ։ Կխորհինք, թե Ձերդ Սրբություն ողջմե այդ ոգիով խմբագրված կոչ մը և նրավեր մը, ուղղյալ ազգյալի մեջ Ձեր Կիլիկյան թեմերին ներս երկրեղկված հոգևորականության և ժողովրդյան. հույժ բարերար իր ազդեցությունը պիտի տարածե բոլորի վրա, որպեսզի մոռացության տրվին նկեղեցական տագնապի օրերուն տխուր հիշատակները և բոլորը ողջագուրվին իրև միևնույն նկեղեցվո և ազգի զավակներ։ Ձերդ Ս. Սության հովանիին և իշխանության ներքև բոլորված։

Մենք Սեր ողջույնները կշարունակենք համաձայն Սեր ծրագրին։ Այժմ կգտնվինք Եգիպտոս։ Նոյեմբեր 14-ին կմեկնինք դեպի Հնդկաստան և հավանաբար դեկտեմբերի կեսերուն վերադարձած կլլանք Մայր Աթոռ։

Ս. Էջմիածին Մեր վերադարձի մասին անշուշտ հաճույքը պիտի ունենանք Ձերդ Սրբության գրելու իր ժամանակին։

Մնամք եղբայրական սիրով ողջույնիս»։

ՆՈՒՊԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 5-ին, երեքշաբթի, *առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և առաջնորդ սրբազանի ընկերակցությամբ, այցելում է Հելիոպոլսի Նուպարյան վարժարանը և Մերճանյան մանկապարտեզը, որոնց աշակերտներուն փոքրիկ սրտերը կբարախեին իրենց Հայրապետին սպասումով* («Արև», *6 նոյեմբերի*)։

Ժամանում է Վեհափառ Հայրապետը և վարժարանի տնօրեն պր. Տիգրան Պապիկյանի, ուսուցչական կազմի և աշակերտության կողմից ընդունվում է հուզումնախառն ցնծությամբ։

Վեհափառ Հայրապետը այցելում է մանկապարտեզի և նախակրթարանի բաժինները։ Ապա գործադրության է դրվում գեղարվեստական մի հայտագիր։

Վարժարանի տնօրեն պր. Տիգրան Պապիկյանը կարդում է ջերմ ուղերձ.

«Վեհափա՛ռ Հայրապետ.

Այսօր Նուպարյան ազգային վարժարանը անմոռանալի թվական մը կարձանագրե իր տարեգրության մեջ։

Ամենայն Հայոց Հայրապետը այցի եկած է մեզի։ Մեր սրտերը անհուն ցնծությամբ լեցված են և մեր աչքերը հափշտակված, անկուշտ նայվածքներ ունին միայն ի տես Ձեր առաքելաշնորհ անձին։

Որքա՜ն երախտապարտ ենք Ձերդ Վեհափառության, որ իր գերագույն առաքելության ճամբուն վրա իսկ, հակառակ խոնջենքին ու սուղ ժամանակին, իր օրհնաբեր այցելությունը կշնորհե հեռավոր այս օվասիսին

...ել ծլարձակած մեր ծաղկաստանին՝ Նուպարյան վարժարանին։

Կրթական այս շքեղ հարկեն ներս, հարյուրավոր հայ մանուկներ տարիներ շարունակ բենց սիրտն ու միտքը ծաղկեցուցած են հայ ...զվին, հայ երգին ու հայ աղոթքին հարազատ ջերմությամբ։ Անոր հիմնադիր բարեբարը եղած է եգիպտահայ պատմական մեր ...ազությանն ամենեն պատմական դեմքերեն մին՝ Պողոս Նուպար։

Սիրելի՛ տղաք, և սիրելի՛ աշակերտներ, ե...անի՞ ձեզի, երանի՞ ձեր աչքերուն, որ ձեր ...ջանքին ամենեն երջանիկ ու անմեղ շրջանին ...ունենաք այս մեծ վայելքը, չքնաղ վայելքը Վեհանայն Հայոց Հայրապետը տեսնելու և ձեր ...մտքին ու սրտին սպիտակ էջերուն վրա մը...տրնջենապես դրոշմելու Անոր երկնաշնորհ դեմքին բարությունը, Անոր մեռոնաբույր ...անձին ներկայությունը, Անոր երկնատուր ...խոսքին քաղցրությունը։

Մենք՝ ձեր ուսուցիչները, ձեր ծնողները, ...ձեր երեցները, այս պահուս միակ մաղթանքը ...մը ունինք ձեզի համար, այն մաղթանքը, ...զոր մեր պապերը մեզի հաստատեցին մեր անմեռման բանաստեղծին բերնով. «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք»։

Վստահ ենք, անխախտ հավատքը ունինք, ...որ քանի մեր Հայրապետական Աթոռին վրա ...Նորին Սրբություն Վազգեն Հայրապետներ ...կարգալին, դուք և Մայր Հայրենիքի ձեր եղբայրներն ու քույրերը, պիտի ապրիք կյանք ...մը ավելի լուսավոր, ավելի փայլուն, ավելի երջանիկ։ Ու ձեր շրթունքները միշտ պիտի օրհնեն անունները անոնց, որոնք գիտցան տրնիլ ու պարբարիլ վասն մեր ցեղին փառավոր հարության։

Վեհափա՛ռ Հայրապետ, թող Ձեր օրհնության խոսքերը իջնեն այս մանուկներուն մատղաշ հոգիներեն ներս, ինչպես առավոտյան թարմ ու մաքրամաքուր ցող, որպեսզի մեր դարավոր ազգին, մեր պանծալի Մայր Հայրենիքին և մեր Եկեղեցին հանդեպ անոնց հավատքը մնա միշտ պայծառ, միշտ լուսավառ։

Շնորհակալությո՛ւն, անհո՛ւն շնորհակալություն Ձերդ Վեհափառության այս օրհնաբեր ու հոգեպարար այցին համար։

Հանուն աշակերտության, ընթերցվում է երախտագետ զգացումներով գրված հետևյալ ուղերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Նուպարյան Ազգային վարժարանի սանեռուս և տանուհիներուս համար երջանկության և երախտագիտության անմոռանալի օր մըն է այս օրը, որովհետև մեր մեջ ունինք Ամենայն Հայոց Հայրապետը, հանձին Ձերդ Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին։

Շատ շնորհակալ ենք, Վեհափա՛ռ Տեր, որ Ձեր թանկագին և սուղ ժամերեն մեզի ալ բաժին հանեցիք, և ահա այժմ մեր մեջ կզտնվիք։

Վեհափա՛ռ Տեր, դժբախտաբար առիթը չենք ունեցած տեսնելու և վայելելու մեր բոլորին սիրելի Մայր Հայրենիքը և չենք ալ գիտեր, որ ե՞րբ այդ բարեբախտության արժանի պիտի ըլլանք։ Այսօր սակայն, մեր հոգեկան աչքերով, Ձեր անձին մեջ կտեսնենք աստվածակառույց էջմիածինը, Ս. Լուսավորչի Այրը, վարդաշեն Երևանը, գեղաշեն Զվարթնոցը, Գայանեն, Հռիփսիմեն, Ս. Օշականը, Սևանը, Մայր Արաքսը, վեհապանծ մասիսներն ու Արագածը։

Մեր ուսուցիչները, ամեն օր և անխոնջ կերպով, կսորվեցնեն մեզի սիրել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Հայրենիքը, մայրենի լեզուն և մշակույթը ու մենք զմեզ շատ հպարտ կզգանք հայ ազգին հարազատ զավակները ըլլալնուս համար։

Եվ այս հանդիսավոր պահուն, կուխտենք ըլլալ արժանավոր հաջորդները մեր նախահայրերուն, հավատարիմ մնալ մեր Եկեղեցին, Հայրենիքին և մշակույթին։

Մեր ուսուցիչները կսորվեցնեն մեզի նաև, որ «երկնից կախ է ընկած» Արագածի գագաթին Լուսավորչի մշտավառ կանթեղը, ու մենք Ձեր անձին մեջ կտեսնենք մեր սուրբ հայրապետներն ու ժողովուրդը ամբողջ, որոնք տվին իրենց քրտինքն ու արյունը, որպեսզի չմարի անիկա։

Այժմ, Վեհափա՛ռ Տեր, Դուք եք մշտավառ կանթեղին արժանավոր պահապանը, և մենք, մեր անմեղ հոգիներով և շրթունքներով կաղոթենք, որ ամենակարող Աստված Ձերդ Վեհափառության արևշատություն և կարողություն պարգևե, որպեսզի Ձեզմով այդ Լուսավորչի կանթեղը մնա մշտավառ։

Վեհափա՛ռ Տեր, կխնդրենք, որ Ձեր առաքելաշնորհ օրհնությունը տաք մեզի, որպեսզի արժանի ըլլանք այն օրվան, երբ մեր բազկի ուժը և մեր քրտինքը պիտի միացնենք և պիտի խառնենք մեր քույրերուն և եղբայրներուն աշխատանքին՝ անմասն չմնալու համար մեր սիրելի Հայրենիքին փառահեղ վերելքին։

Կեցցե՛ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, կեցցե՛ Մայր Հայրենիքը և կեցցե՛ Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ առաքելաշնորհ Վազգեն Ա-ը։

Այնուհետև ելույթ է ունենում Վեհափառ Հայրապետը և օրհնում կրթական սույն հարկի մշակներին ու աշակերտությանը։

Ապա, հոգաբարձության և ուսուցչական կազմի մասնակցությամբ, տեղի է ունենում հյուրասիրություն Վեհափառ Հայրապետի պատվին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «ՀՈՒՍԱԲԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ

Նոյեմբերի 5-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբի, առաջնորդ սրբազանի և ազգային իշխանության ներկայացուցիչների ուղեկցությամբ, այցելում է «Հուսաբեր» մշակութային ընկերակցության սրահը, ուր իր բարձր պատվին կազմակերպվել էր գեղեցիկ հանդիսություն և ապա ընդունելություն «Նավասարդ» սրահում։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է սրահ, ներկա ավելի քան հազար հոգինոց բազմության խելահեղ և խանդավառ ծափերի մեջ։ Նորին Ս. Օծության օրհնաբեր ներկայությունը ողջունում է ընկերակցության նախագահ պր. Ա Ջագրեյանը հետևյալ ուղերձով.

«Վեհափա՛ռ Տեր.

Եգիպտոսի հայ գաղութը անհունորեն երջանիկ է այս օրերս, որ իր մեջ կգտնվի, հանձին Ձերդ Վեհափառության, իր սիրելի և արժանընտիր Ամենայն Հայոց Հայրապետը։ «Հուսաբեր» մշակութային ընկերակցությունն ու անոր նպատակներուն ու գործունեության շուրջ բոլորված Ձեր զավակները առավել ևս երջանիկ են, որ այդ նույն արժանընտիր ու սիրելի Հայրապետը այս պահուս կգտնվի իրենց տան մեջ։

Թույլ տվեք ինձի այս մեծապես ուրախ առիթով, «Հուսաբեր» մշակութային ընկերակցության նախագահի համեստ հանգամանքով, անոր վարչության, անդամներուն, նաև ներկաներուն կողմե իմ սրտագին շնորհակալությունները հայտնելու այն բացառիկ պատվին համար, որ ըրիք մեզի, ընդունելով մեր հրավերը և հյուրը ըլլալու մեր տան։

Վեհափա՛ռ, այս երկրորդ անգամն է, որ կուգաք Եգիպտոս, բայց այս անգամ կուգաք որպես աստվածաշնչական նորատեսակ լրբեր մը, մեզի բերելով ավետիսը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիին միասնականության վերահաստատումին, ողջագուրումով մեր երկու շնորհազարդ Հայրապետներուն Երուսաղեմի Ս. Հակոբյանց Տաճարին կամարներուն տակ, որուն մեջ Ձեր ստանձնած նախաձեռնությունը պատմական կշիռ ունի։

Այսօր, հայ ժողովուրդի ազգային կյանքի երկնակամարին վրա, Ձեր շնորհիվ, կատարածվի գոտի մը խաղաղության, եղբայրության, սիրո և համերաշխության անկորնչելի գույներով։

Որքա՜ն երջանիկ է այսօր համայն հայ ժողովուրդը, որքա՜ն հուզումնալից բերկրությամբ ու սփոփանքով լեցված է անոր սիրտը, երբ ան կտեսնե, որ մեր երկու սիրելի հայրապետներուն շնորհիվ անգամ մը ևս կհաղթանակե մեր անմահ ժողովուրդին ցեղային առողջ գաղափարությունն ու խոհականության բարձր ոգին։

Կհավատանք Ձեզի, Վեհափա՛ռ, և վստահ եղեք, որ կհասկնանք Ձեզ և այդ իսկ պատճառով մեր սիրելի երկու հայրապետներուն օրինակին հետևելով, պիտի չանանք մոտիկ տխուր անցյալեն ոչինչ հիշել, մեզ և մեր գործերը դնելով նոր ճամբու վրա՝ ի շահ մեր եկեղեցիին և մեր անմահ ազգին։

Վեհափա՛ռ, մեր ազգային ու եկեղեցական պատմության մեջ ունինք մեծանուն մեկ քանի հայրապետներ՝ Հուսիկ, Ներսես, Մահակ, Հովսեփ, մինչև Աշտարակեցի, Խրիմյան և Մուրադբեկյան, որոնք իրենց ճահատակությամբ կամ հայրենասիրական շքեղ գործերով նույնացան մեր պատմության հետ։

Դո՛ւք, սիրելի՛ Վեհափառ, Հայաստանյայց եկեղեցիին մատուցած Ձեր վերջին այս մեծ ծառայությամբ անցաք այդ մեծ կաթողիկոսներու շարքին։ Իբր այդ է, որ հայ ժողովուրդը, Հայ եկեղեցին և անոնց կարգին «Հուսաբեր» մշակութային ընկերակցությունը կմեծարեն Ձեզ այսօր մաղթելով, որ Տերը անսասան պահե Ս. էջմիածնի Լուսավորչյան Աթոռը և պարգևե Ձեզի առողջություն և երկար կյանք։

Այնուհետև գործադրության է դրվում մասնավոր կերպով այս պատմական այցելության առթիվ պատրաստված գեղարվեստական մի հայտագիր՝ երգերից, արտասանություններից բաղկացած և մի տեսարան «Անուշ» օպերայից և հայկական ու ուկրաինական պարեր։

Ապա խոսք է առնում «Հուսաբեր» թերթի խմբագիր պր. Բեզլար Նավասարդյանը, որն իր ճառի մեջ անդրադառնում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Կիլիկիո Կաթողիկոսի Երուսաղեմում հոկտեմբեր 26-ի պատմական ողջագուրումի ազգային-եկեղեցական նշանակությանը։

Այնուհետև, ներկաների սրտագին ծափահարությունների մեջ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը։ «Ան երբ Իրեն համար պատրաստված աթոռին վրա նստավ, պահ մը լուռ մնաց։ Հայտնապես հուզված էր ի տես Իր այդ հայրենասեր և էջմիածնասեր զավակներուն, որոնք Իրեն վերապահած էին Իր բոլոր ակնկալությունները գլուխ անցնող նման ընդունելություն մը» («Հուսաբեր», 6 նոյեմբերի)։

Վեհափառ Հայրապետի խոսքը

«Այս պահուս կմտածեմ. ի՞նչ կսպասեմ Մեզմե, ի՞նչ կուզեմ, որ ձեզի խոսիմ։ Դժվար

Մեզի համար ձեր հոգիներեն ներս թափանցել և կարդալ ձեր բոլոր իղձերն ու ցանկությունները: Այնուամենայնիվ, կկարծենք, թե ձեր բոլորի ներքին ցանկության ընդառաջած կլլլանք, երբ նախ հայտնենք ձեր բոլորին՝ «Հուսաբեր» մշակութային ընկերակցության պետական ներուն և անդամներուն, այս տան դրնակիչներուն, այսինքն բոլոր անոնց, որոնք հավաքված են անոր շուրջ, և այսօր այստեղ հավաքված հասարակության, թե ձեզ կրերենք ողջույն և օրհնություն Ս. Էջմիածնեն և մեր վերածնած Մայր Երկրեն՝ Հայաստանեն:

Մենք լրված ուշադրությամբ հետևեցանք այն ծրագրին, որ գործադրվեցավ այս երեկո այս բեմեն. թե՛ գեղարվեստական բաժնին, իր երգերով, պարերով և արտասանություններով, թե՛ հավասարակշռված ու խոր իմաստ պարունակող այն խոսքերուն, զորս արտասանեցին «Հուսաբեր» մշակութային ընկերակցության նախագահը և օրվան բանախոսը:

Այս բոլորը կատարվեցավ իրապես այնպիսի խոր ապրումով, այնպիսի վավերական հուզումով, որ Մեր վրա, հավատացե՛ք, ձգեց մեծ տպավորություն: Եվ հավատացե՛ք, վստա՛հ եղեք, որ շատ բան այս տպավորություններեն և այս ապրումներեն, զորս քաղեցինք այս երեկո այստեղ, անպայման Մեր հետ պիտի տանինք տուն, դեպի մեր հայրենի երկիրը և հաղորդակից դարձնենք այնտեղ ձեր հարազատ եղբայրներուն ու քույրերուն:

Այս երեկո, ձեր ամբողջ ծրագիրը, ձեր բոլոր խոսքերը Մեր հոգիին մեջ արթնցուցին այն ամենը, որ Մեզ կկապե այն երկրին, ուրկե կուգանք:

Մեկ ամիսե քիչ մը ավելի է, որ բաժնված ենք մեր հայրենիքեն և առդեն ոկսած ենք ապրիլ կարոտի զգացումը, բայց այս երեկո կարոտի այդ զգացումը ավելի խորացավ, ավելի ուռճացավ: Հիշեցինք Հովհաննես Թումանյանի խոսքերը.

«Կանչում է երկին, կանչում անդադար,
Էն չքնաղ երկրի կարոտը անհուն:
Եվ թևերն անա բացած տիրաբար,
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն»:

Այս երեկո, անշուշտ, մեր բոլորի հոգիները թռան դեպի տուն, թռան դեպի հայրենի երկիր, դեպի մեր նախահայրերու երկիրը, դեպի հոն, ուր մեր աղոթավայրերն ու տաճարներն են կառուցված հին-հին ժամանակներուն, հոն, ուր մեր հոչակավոր օրթավայրերն են, հոն, ուր հայ ժողովուրդը կառուցած է ապրելու և տոկալու իր ամրոցները, հոն, ուր իր ազգային հոչակավոր հարտարապետության կոթողներն են կանգնած, այն երկիրը, ուր դարբնված ու պանված է մեր ժողովուրդի հերոսական պատմությունը, այն երկիրը, ուր հայ ժողովուրդը, ո՞վ գիտե, քանի-քանի անգամ իր կյանքի գնով պաշտպանած է իր ազգային հողը, այն երկիրը, որ այսօր, վերջապես, բազում դժբախտություններու ետք, անա քառասուն-քառասունհինգ տարիներու ընթացքին, փակ բախտի դռները բացած է և նոր կյանքի մը հունքեն մտած, հետզհետե բուժելով իր հին վերքերը, և վերաշինելով իր ավերված տուները. կվերականգնե իր հնամյա հայրենիքը, կկազմակերպե ու կամրապնդե իր նոր կյանքը և կբանա նոր հանապարհ դեպի ապագան:

Երբ արտասանվեցավ «Հարգանք քեզ»-ը, հիշեցինք Ավետիք Անտոնյանի «Շվեյցարական գյուղը» խորագրով գործը, որ գրած է Լերմոնտովի ազդեցության տարիներուն: Հեղինակը, իր ուսման շրջանին, Զվիցերիայեն իր տպավորություններն ու հուշերը կպատմե: Եվ պահ մը կխոսի գյուղացի, իգդիրցի Ա. Անտոնյանը: Կհիշե, թե ինչպես հանդիպած է զվիցերիացի գյուղացիները, տեսած է անոնց կյանքի պայմանները և փորձած է անոնց պատմել հայ գյուղացիի կյանքի պայմանները: Եվ Անտոնյան կվկայե, որ երբ անոնց ըսեր, թե հայ գյուղացին կքայլե գլխուն վրա և ոտքերը դեպի վեր, ասոր պիտի հավատային ավելի դյուրությամբ, քան այն պայմաններուն, որոնց մեջ կգտնվեր հայ գյուղացին այդ օրերուն, այսինքն վաթսուն-յոթանասուն տարի առաջ: Անտոնյան անշուշտ խոր դառնությամբ կվկայե այս բոլորը և ամբողջ հոգիով կփափագի, որ Հայաստանի մեջ ստեղծվին այնպիսի պայմաններ, որ հայ գյուղացին կարենա մարդավայել կերպով ապրիլ:

Անա այսպես էր, սիրելի՛ ժողովուրդ, հայ գյուղացիի հակատագիրը, այսինքն հայ ժողովուրդի հակատագիրը, քանի որ հայության հնչիչ մեծամասնությունը գյուղացիությենե բաղկացած էր այն առեն:

Մտաբերենք այս իրողությունը, որպեսզի կարենանք հիշտ տեսնել, կարենանք հիշտ ըմբռնել այն, ինչ որ կկատարվի այսօր մեր վերածնած Մայր Հայրենիքին մեջ, և մանավանդ կարենանք արդարորեն գնահատել այդ կատարվածը:

Կուզենք ձեզի անկեղծորեն ըսել, թե տակավին շատ մը անկատարություններ կան Հայաստանի մեջ, կան պակասներ, և տակավին շատ ընելիք բան, բայց կարևորը, Մեր կարծիքով, այն է, որ հայ ժողովուրդը վերածնունդի, բարգավաճման և տնտեսական զարգացման հանապարհին վրա կգտնվի և քայլ առ քայլ կնառաջդիմե, կնաղթանարե բոլոր դժվարությունները: Հեզգնետ կարբգրվին սխալները, հետզհետե կկատարելա-

գործվին թերի կողմերը և Մենք վստահ ենք և կհավատանք, որ հայ ժողովուրդը մոռ ապագային պիտի ըլլա ամբողջապես բարոր ու երջանիկ:

Այո՛, Մենք ալ կհավատանք ձեզի հետ, թե արտասահմանի մեջ չկա հայ մարդ, որ չսիրե Հայաստանը, չսիրե տեսնել անոր հառաջդիմությունն ու վերելքը, շնորհի անոր նվաճումներով՝ մշակութային, կրթական և գիտական: Կհավատանք նմանապես, որ չկա հայ մարդ, որ չսիրե Ս. էջմիածինը, որ չփափագի հայ եկեղեցական կյանքի զարգացումը և բարգավաճումը՝հայրենիքի սահմաններեն ներս թե դուրս: Կհավատանք, թե չկա հայ մարդ, որ չուզե, որ ամրանա Ս. էջմիածնի հեղինակությունը Մայր Հայրենիքեն ներս և Մայր Հայրենիքեն դուրս:

Ասոնք Մեզի համար հստակ ու պարզ ճշմարտություններ էին: Թերևս պետք էր, որ որոշ պայմաններ ստեղծվեին, որպեսզի այդ ճշմարտությունները ավելի ցայտուն կերպով ի հայտ գային և դեպքերը ավելի արագ ընթացք ստանային:

Եվ կկարծենք, թե ա՛յս է, որ իրականություն դարձավ Երուսաղեմի մեջ Խորեն Կաթողիկոսի հետ Մեր ողջագուրումովը:

Սակայն ոչ այդ մասին է, որ Մենք կուզեինք խոսիլ ձեզի:

Պիտի ուզեինք երկու խոսքով անդրադառնալ Մեր այն ներքին ապրումներուն, որ ունեցանք այս վերջին վեց-յոթը տարիներուն, այսպես կոչված «եկեղեցական տագնապ»-ի օրերուն:

Մենք հանախ կրկնեցինք զանազան առիթներով թե՛ կենդանի խոսքով, թե՛ Մեր կոնդակներով, որ այդ պայքարը իմաստե զուրկ է, արվեստական է և չի համապատասխաներ հայ ժողովուրդի և Հայ եկեղեցիի ընդհանրական շահերուն: Կխորհինք, որ անշուշտ միայն Մենք չէինք այսպես դատող, այլ բոլոր սրբազավ հայերը, աշխարհական թե հոգևորական, Հայաստանեն ներս թե Հայաստանեն դուրս: Կխորհինք, թե բոլորը կփնտռեին հանապարհ մը, որպեսզի եկեղեցին Հայկական դուրս ելլե վտանգավոր տագնապեն: Եվ անա Մեր այցելությունը Երուսաղեմ ստվածապարգև առիթ մը հանդիսացավ:

Հակառակ տիրող հակասությանց և անորոշությանց, թույլ տվեք ըսել, հետևելով Մեր ներքին խղճի ձայնին, հետևելով հայ ժողովուրդի սրտի ձայնին, Մենք հախտնեցանք ուրախություն ստանձնեցինք և ժողովրդական բառով՝ սառույցը կոտրեցինք, առանց այլևս նկատի առնելու այլևայլ պարագաներ, հեղինակության հարց կամ նման խնդիրներ, որոնք փոքր զգացումներ են Մեր կարծիքով, մեր ժողովուրդի և եկեղեցիի գերագույն շահերուն առջև:

Եվ եղբայրական սիրո հրավեր ուղղեցինք Մեր եղբար՝ շնորհազարդ Խորեն Կաթողիկոսին, հայտնելով Մեր իղձը զինքը շնորհավորելու իբրև նորընտիր Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Կխոստովանինք, թե այդ պահերուն ներքին հակասություններ և ծանր ապրումներ ունեցանք: Եվ սրտատրոփ կսպասեինք, թե ի՞նչ պատասխան պիտի գա Անթիլիասեն: Մտահոգված ալ էինք մեկ երկու օր: Զանազան գուշակություններ ալ կային:

Բայց այդ մտահոգությունը շուտով փարատեցավ, որովհետև շուտով մեզ հասավ ավետիսը և այլևս կսպասեինք Խորեն Կաթողիկոսի գալուն:

Եվ Մենք հոգեպես և իրապես հրճվեցանք, երբ Խորեն Կաթողիկոս իր շքախմբով մտավ Երուսաղեմի Պատրիարքարանի դահլիճը: Մենք ողջագուրվեցանք սուրբ հուզումներով զեղուն: Մեկ ակնթարթի մեջ, արդեն ամեն ինչ վերջացած էր: Մենք այլևս ոչինչ կենիշեինք անցյալեն: Եվ այլևս երբեք, ոչինչ պիտի չենիշենք անցյալեն:

Հավատացի՛ք, թերթերու մեջ գրվածը շատ աղոտ կերպով միայն կուտա այն, ինչ որ կատարվեցավ: Այն, ինչ որ գրվեցավ մամուլին մեջ, թերի է. հուզիչ էին բոլոր արտահայտությունները և շատ հանախ բոլորիս աչքերը լի էին արցունքով:

Հիշվեցավ այստեղ Գարեգին վարդապետի խոսքը, որ իսկապես հրաշալի խոսեցավ, սակայն միայն Գարեգին վարդապետը չէր: Եղան նաև ուրիշներ, ինչպես եղիշե Պատրիարքը, Սերովբե արքեպիսկոպոսը, Ղևոնդ արքեպիսկոպոսը, պր. Խաչիկ Պապիկյանը և դեռ ուրիշներ, և Ինքը՝ Խորեն Կաթողիկոսը, ինչպես նաև Մենք, բոլորս մեկ, իրոք խոսեցանք և արտահայտվեցանք այնպես, կարծես այդ յոթը տարիները գոյություն ունեցած չըլլային, կարծես եղբայրներ ըլլայինք, որոնք լուսավոր ու բաց հանապարհի մը վրա կգտնվին միասին, որոնք միասնաբար իրենց պատասխանատվությունը կհայտնեն ծառայելու միևնույն Հայ եկեղեցիին և միևնույն հայ ժողովուրդին:

Այս իրողությունը անգամ մը ևս կապացուցե, թե ո՛րքան ապարդյուն, ո՛րքան ի զուր անցան վերջին յոթը տարիները, որոնք եղան անիմաստ պայքարի մը շրջանը:

Մենք համոզված ենք, թե համերաշխության և ազգային ներքին միության ոգին պետք է տարածվի ոչ միայն եկեղեցիեն ներս, այլ նաև անոր սահմաններեն դուրս, տարածվի մեր ժողովուրդին ազգային նյանքին վրա, մեր բոլոր կազմակերպություններուն վրա:

Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Մամբրե
արքեպիսկոպոս Սիրունյան

Ա՛յն ատեն, թերևս իրոք, տեսակ մը պատմական դարձակետ կճանդիսանա Երուսաղեմի ողջագուրումը, և եթե այդպես ըլլա, Մենք խորապես մխիթարված պիտի զգանք զՄեզ: Մենք այդքանը չնախատեսեցինք գուցե այն օրերուն, բայց Մենք այժմ կզգանք, թե այն լուսավոր ճանապարհը, որ բացվեցավ, իրոք, ճետզճետե պիտի գտնե իր ճարազատ ճուռը և առավել ևս պիտի լուսավորե ամբողջ արտասանմանի ճայության կյանքը:

Մենք փոքրիկ ժողովուրդ ենք, մենք փոքրիկ եկեղեցի ենք և մանավանդ արտասանմանի մեջ ճայությունը կանգնած է բազում դժվարությանց առջև՝ եկեղեցական, ազգային, կրթական, մշակութային: Հետևաբար զուր տեղը նոր դժվարություններ պետք չէ ճարուցանել մեր տկարություններով, մեր ներքին անճասկացողություններով:

Անշուշտ, միամտություն կըլլար ակնկալել, որ արտասանմանի ամբողջ ճայությունը կրնա միատեսակ մտածել ամեն ճարցի շուրջ: Այդ գուցե բնական ալ չըլլար, բայց այն, ինչ կվերաբերի մեր եկեղեցվո, մեր ժողովուրդի ճիմնական և տևական շահերուն, այդտեղ անա, կկարծենք, որ անհրաժեշտ է և ճնարավոր, որ միասնություն և գործակցություն ըլլա:

Եվ Հայաստանյայց եկեղեցին, Ս. Էջմիածինը և մեր մյուս նվիրապետական Աթոռները միասին, արդեն իսկ իրենց ուսերուն վրա առած են այդ առաքելությունը, ճոգևոր-եկեղեցական գետնի վրա:

Աշխարճի մեջ ցրված ճայությունը պետք է գիտնա, թե Ս. Էջմիածինը նվիրված է իրագործելու ճոգևոր միությունը ճայ ժողովուրդին, նպատակ դրած է պանպանելու ճոգևոր կապը Մայր Հայրենիքի և արտասանմանի միջև:

Այս նշմարտությունը, կխորհինք, ճստակ պետք է ըլլա բոլորին ճամար: Մենք նույն իմաստով խոսեցանք Խորեն Կաթողիկոսին և Անթիլիասի պատվիրակներուն: Ըսինք, թե իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս կսպասենք, որ ամեն ճայ և առաջին ճերթին ինքը՝ Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը և Երուսաղեմի Պատրիարքությունը և բոլոր նվիրապետական կեդրոններու ճոգեվորականները լավ ճասկնան ճոգևոր առաքելությունը Ս. Էջմիածնի, լավ ճասկնան անոր գոյության ազգային իմաստը մեր ճայ կյանքին մեջ:

Պատմական բախտորոշ այս օրերուն, որոնց մեջ կապրինք, Մենք չենք տարակուսիր, թե անիվը կրնա նա դառնալ: Մենք և Անթիլիաս և մեր մյուս Աթոռները այլևս երբեք չենք բաժնվիր իրարմե: Մենք կճավատանք, որ ճետզճետե պիտի գիտնանք լուծել առկախ մնացած ճարցերը: Հիմնականը և կարևորը

այն ոգին է, սիրո, եղբայրության և փոխադարձ հարգանքի ոգին, որով սկիզբ առավ մեր նոր հանապարհը:

Կուզենք վերջացնել Մեր խոսքը և անգամ մը ևս հայտնել Մեր անկեղծ գոհունակությունը, որ գտնվեցաք այս հարկին տակ, ձեր մեջ: Անգամ մը ևս կուզենք կրկնել Մեր ողջույնը և օրհնությունը ձեզի, հաջողություն մաղթելով այս ակումբի վարիչներուն, որպեսզի շարունակեն իրենց աշխատանքը հայրենասիրական ոգիով, հայրենասիրական այն ոգիով, որ արտահայտվեցավ այս գիշեր այս սրահին մեջ, որպեսզի մեր նոր սերունդը իսկապես սրտով ու հոգիով հայ մնա և անխոտելի կերպով կապված Հայոց հայրենի աշխարհին:

Մեր կրոնական հավատքը, մեր մայրենի լեզուն, մեր մշակույթը և հայրենական զգացումը, ասոնք մեկ և անխորտակելի ամբողջություն մը կկազմեն: Պետք է հսկենք, որպեսզի այդ ամբողջությունը անսասան մնա: Պետք է աշխատինք, աշխատինք ամեն կերպ, նույնիսկ անհնարինը փորձենք, որպեսզի հայ ժողովուրդը կենդանի մնա ամեն տեղ:

Մենք չենք ուզեր մեռնիլ: Մենք կուզենք ապրիլ և իրականացնել ազգային ամբողջական իրականություն մը, ամբողջական հայություն մը հայրենի հողին վրա:

Եվ վերջացնելով Մեր խոսքը, կուզենք ձեզի ապահովություն մը տալ: Գիտեք, երբ 1956 թվականին արտասահման եկանք, Մենք տակավին լրիվ հայաստանցի չէինք: Բայց հիմա կկարծենք, որ կրնանք Ինքզինքնիս հայաստանցի նկատել: Կրնանք հետևաբար ձեզի վստահեցնել, թե իրապես ու խորապես կճանչնանք հայաստանցի հայ մարդը և գիտենք, թե հայաստանցի հայ մարդու հոգիին մեջ ինչ ապրումներ կծաղկին: Ավելցնենք անմիջապես, որ այդ հայ ապրումները նույնն են ամեն տեղ, նույնն են արտասահմանի մեջ: Այդ ապրումները նույնն են նաև այստեղ:

Եվ վստահաբար, Մեր վերադարձին շատ-շատեր, ոչ միայն մտավորականներ, այլև պարզ հայ մարդիկ, հայ գյուղացիներ, բուն հայ ժողովուրդը, պիտի գան և հարցնեն Մեզի. «Վեհափա՞ռ, արտասահմանում հայերի հանդիպեցի՞ք, ո՞նց են ապրում. հայերեն խոսո՞ւմ են, թե մոռացել են մեր լեզուն. Հայաստան վերադառնալո՞ւ են»:

Եվ բազմաթիվ նման հարցումներ:

Մենք անոնց պիտի փոխանցենք ձեր ողջույնները և ձեր սրտեն բխած բոլոր հայկական զգացումները: Վստա՛հ եղիք, այդ բոլորը հասնելի պիտի ըլլան անոնց սրտերուն և անոնց աչքերն ալ պիտի փայլին արցունքով:

Փառք տանք Աստուծո, որ հայ ժողովուրդը առողջ է իր հոգիով և իր մտքով և վստահ ենք թե այսպիսի ժողովուրդ մը իրոք պիտի հասնի իր բոլոր արդար իղձերու իրականացման:

Թող Աստված օրհնե մեր ժողովուրդը, մեր կյանքը և մեր ապագան: Ամեն»:

Վեհափառ Հայրապետը իր խոսքի վերջաբանությունը, «Հուսաբեր» մշակութային ընկերակցության նվիրում է Ս. Էջմիածնի նկարը:

Այնուհետև Նորին Ս. Օծությունը, իր շքախմբով, առաջնորդվում է «նավասարդ» ակումբը, որտեղ վարչության տիկնանց կողմից պատրաստվել էր ճոխ սեղան՝ նրա բարձրը պատվին, ավելի քան 250 հրավիրյալներ մասնակցությամբ:

Ընդունելությունը վերջանում է գիշերվա ժամը 1-ին Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոյեմբերի 6-ին, շաբաթշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով այցելում է Կահիրեի տովեստական դեսպանատունը, ուր ընդունվում է ջերմորեն:

Առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, այցելում է Մխիթարյան և Անարատ Հղության քույրերուն վարժարանները, ինչպես նաև Այծեմնիկներ տիկնանց միության հանգստյան տունը:

Ամենուրեք Վեհափառ Հայրապետը դիմավորվում է ջերմ և հուզիչ ընդունելությամբ: «Շատ կիրթ և սրտագին դրոշմ ուներ «Մխիթարյան» վարժարանի ընդունելությունը...» Հայաստանեն եկող Հայրապետը, տասնյակ մը սան-սանուհիներ, հայկական խայտաբղետ տարազի մեջ, առաջնորդեցին մատուռ ու անկե գավիթի մեջ պատրաստված Իր Գահը» («Արև», 7 նոյեմբերի):

Վարժարանի տեսուչ Հ. Բարսեղ Ֆերհատյանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ողջունում է խանդավառ զգացմունքով: Հ. Վարդան Աշդարյանը ընթերցում է Նորին Ս. Օծության ձոնված մի հուզիչ ուղերձ:

Հայոց Հայրապետը հանդիսության վերջում, օրհնելով կրթական սուրբ հաստատությունը ևս, գնահատանքի ջերմ խոսքերով է արտահայտվում Մխիթարյան միաբանության կատարած գրական, կրթական գործունեության մասին և կոչ է անում աշակերտության զարգանալ, հասակ առնել Ավետարանի լույսի, Մայր Հայրենիքի և հայ ժողովրդի սիրույն մեջ: Ի պատիվ և ի հարգանս Վեհափառ Հայրապետի, մի օր հանդիսավոր է շնորհվում աշակերտության:

ժամը 1-ին, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպում է ճաշկերույթ, որն անցնում է ջերմ մթնոլորտում։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՈԿԱՆՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ

Նոյեմբերի 6-ին, շաբաթ երեկոյան ժամը 9-ին, Հելիոպոլսի Կոկանյան սրահի ամբողջ պարտեզը պատվել էր արաբական գունագեղ վրաններով և գորգերով և լցվել էր խուռն բազմությամբ։

Բազմությունը համախմբվել էր ընդարձակ սրահներից մեկի հարկի տակ, ընդունելու իր հոգևոր Գերագույն Պետին, որ ճիշտ որոշյալ ժամին ժամանեց սրահ։ Սրահի մուտքին, կարգադիր հանձնախմբի երիտասարդները շղթա կազմեցին ճամբի երկու կողմերը, իսկ հարվական տարազներ հագած աղջիկներ վարդի թերթեր ցանեցին Վեհափառ Հոր ոտքերի առաջ։

Այս շքեղ հանդիսության ներկա էին ազգային իշխանությունների ներկայացուցիչները, հայկական վարժարանների տնօրենները և այլ կազմակերպությանց ներկայացուցիչները։

Ընդունելության ժամանակ գործադրության է դրվում նաև գեղարվեստական մի հայտագիր։

Ընդունելության ընթացքին խոսք են առնում պարոնայք Է. Կոտայազյանը, Ա. Սարուխանը, ճարտարապետ Միքայել Մազմանյանը, Կայծ Կոկանյանը, Համբարձում Գարայանը։ Վերապատվելի Վահան Թուրիկյանն իր ելույթում ասում է.

«Վեհափա՛ռ Տեր.

Որպես Կահիրեի հայ ավետարանական համայնքի հոգևոր հովիվը, կուզեմ իմ և համայնքիս կողմե մեր անխառն ուրախությունն ու հրճվանքը հայտնել Ձերդ Սրբության, Ձեր գաղութիս տված բարեբաստիկ և օրհնաբեր այցելության առթիվ։

Մեզի համար ոչ միայն հաճույք, այլ մանավանդ առանձնաշնորհում մըն է ունենալ մեր մեջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Գերագույն Հովվապետը, Ձերդ Ս. Օծությունը, որպես մեր գաղութին մեծ Հյուրը։

Կահիրեի մեր Մայր Եկեղեցին զավակները Ձեզ իրենց մեջ ունենալնուն համար ուրախ են. ուրախ ենք նաև մենք, հայ ավետարանականներս, որովհետև իրրև մեկ ազգի զավակներ, միշտ իրենց ուրախությունը մեր ալ ուրախությունը նկատած ենք, ինչպես իրենց ցավը՝ մեր ցավը։ Ու այսօր, Ձերդ Սրբության բարեբաստիկ այցելության առթիվ, մենք հավասարապես կրաժնենք իրենց անխառն ուրախությունը։

Վեհափա՛ռ Տեր.

Այն անպատմելի երջանկությունը և արտասովոր խանդավառությունը, զոր Ձեր քաղցր ներկայությունը կպատճառե ամենուս, ոչ միայն սոսկական արդյունքն է այն բարձր հանգամանքին ու եկեղեցական կարգին, որ Ձերդ Ս. Օծությունը ունի, որպես Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս, այլ նաև մանավանդ, արդյունքն է այն իրականության, որ այսօր հայ ժողովուրդը ի՛նչ հրանվանության, ի՛նչ հոսանքի և ի՛նչ գույնի ալ պատկանի, Ձեր մեջ կտեսնե այն անձնավորությունը, այն մեծ Հայրապետը, որ կմարմնավորե մեր ազգային-եկեղեցական կյանքին իղձերը, հույսերն ու ձգտումները, մանավանդ անոնց իրականացումը։

Այսօր մենք բոլորս Ձեր մեջ կտեսնենք այնպիսի Հայրապետ մը, որուն սիրտը, հոգին հանդիսարան է մեր ազգային-եկեղեցական մտահոգություններուն և ձգտումներուն հավասարապես, այնպիսի Հայրապետ մը, որուն կուրծքին տակ կտրոփե հայ ժողովուրդին ցավերով տագնապող սիրտ մը, մանավանդ այդ կոտտացող ցավերուն սպեղանի և դարման գտնող մեկը, այնպիսի Հայրապետ մը, որ լիովին կարդարացնե Իր հոտին և բովանդակ հայ ժողովուրդին ակնկալությունները, որուն պերճախոս ապացույցը տեսավ ան անցնող հոկտեմբեր 26-ի պատմական անմոռանալի օրը։

Հիրավի, Վեհափա՛ռ Տեր, Դուք այդ օրը համերաշխության և համագործակցության նոր թվական մը կերտեցիք, որ մխիթարության, հոգեկան կազդույրի ու հոգևոր նվաճումներու նոր հեռանկարներ կբանա հայ կյանքի հորիզոնին վրա։ Հոգևոր այդ մեծ հոլովույթի մեջ, մենք կտեսնենք հայ ժողովուրդի հոգևոր լուսավորության, հոգևոր վերածնունդի և ազգային միասնականության իրականացման առաջին մեծ և հաստատ քայլը։ Այս իսկ պատճառով ուրախությունը ամենուս է, բովանդակ հայ ժողովուրդինը։

Այս առթիվ, մեր զգացված սրտի համակրանքն ու գորովանքը համառոտելով, կրսենք Ձեզի. Հարգա՛նք և պատի՛վ Ձեզի, Վեհափա՛ռ Տեր.

Եվ ի խորոց սրտի անդամ մըն ալ կրսենք Ձերդ Ս. Օծության.

Բարով եկաք, բարով երթաք,
Ծաղկած ճամբով, փառքով երթաքս։

Հանդիսության վերջում խոսք է առնում նաև Վեհափառ Հայրասլետը։ Նորին Ս. Օծության ճառը ունկնդրվում է հուզումով և հետաքրքրությամբ։ Ապա Կոկանյան սրահի վարչությունը Հայոց Հայրապետի պատվին

կազմակերպում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ և հյուրեր։

Սեղանը շնորհալիորեն վարում է Ա. Սարուխանը, ստեղծելով ջերմ, հայկական մթնոլորտ սեղանների շուրջ։

Ընդունելության վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը *հետևյալ ճառով.*

«Ամեն օր որ կուգա, Մեզի կբերե նոր ուրախություն մը։ Եվ այսպես անցան Մեր բոլոր օրերը մինչև այսօր, Նեղոսի ափերուն։ Այս պահուն կգտնվինք ձեր մեջ, Կոկանյան սրահի կամարներուն տակ, այս շատ գեղեցիկ և գունազարդ վրանին ներքև, որ այնքան կգվարթացնե մթնոլորտը։ Մենք այս պատկերը, այս շատ գեղեցիկ և հրապուրիչ պատկերը երբեք պիտի չմոռնանք։

Մեզի համար նվիրական պարտականություն է, առաջին հերթին այստեղ ալ, Կոկանյան սրահին, անոր վարչության և բոլոր անդամներուն և բոլոր այստեղ ներկաներուն, բերել սիրո ողջո՛յն և օրհնությո՛ւն Մայր Աթոռ Ս. էջմիածնե, սիրո ողջո՛յն մեր հայրենի երկրե, մեր ալեհեր և վեհափառ Արարատե, որուն անունը այստեղ այնքան հուզիչ կերպով վերստին հիշվեցավ։

Ձեզի ողջո՛յն և օրհնությո՛ւն մեր բոլոր սրբավայրերե, մանավանդ Ս. Մեսրոպի՝ անմահ Վարդապետի շիրիմե, Օշականե, և նաև ձեր հայաստանցի եղբայրներե և քույրերե, որոնք ձեզի անձնապես չեն հանշնար, բայց իրենց հոգիներուն մեջ, իրենց գիտակցության մեջ, մանավանդ այս վերջին ժամանակաշրջանին, հետզհետե ավելի ներկա կդառնա արտասահմանի հայության գոյությունը։

Այս ալ մխիթարական երևույթներեն մեկն է, որ զարմանալի կերպով հետզհետե կաճի, կուռնանա և կխոսրանա, և այս կերպով, իրոք որ, կրյուրեղանա հետզհետե հայ ժողովուրդի գեր հոգեկան և բարոյական միասնությունը։

Հայրենի ժողովուրդի և ի սփյուռս աշխարհի պանդուխտ Մեր զավակներու մեջ այս զգացումը գտ է։ Այս զգացումը առավել ևս պետք է պայծառանա, խորանա և բյուրեղանա, որովհետև, Մենք ալ կհավատանք այսօրվան բանախոսներուն նման, թե ամենամուր պատվանդանը, ամենամուր, ամենապաճուն և ամենաստույգ միջոցը արտասահմանի հայությունը կենդանի պահելու՝ այդ հոգեկան-բարոյական միության, Հայաստանի ժողովուրդի հետ մեկ ըլլալու զգացումն է։ Այստեղ երեք խոսք առնողներն ալ, բայց մանավանդ առաջինը՝ Կոկանյան սրահի հարգելի նախագահը պր. Դարայան, այնքան իմաստուն խոսեցավ, այնքան մտածված և հավասարակշռված։ Իր խոսքերը բառերու շռայլումներ չէին, այլ ճշմարիտ մտածումներ, ճշմարիտ հայու, իրատես հայու արտայայտումներ։

Հիմնական միտքը բոլոր խոսողներուն այն էր, որ արտասահմանի հայությունը պետք է կենդանի պահել, մանավանդ բարոյական և հոգևոր կապը ամուր պահպանելով Մայր Հայրենիքի, մեր ժողովուրդի մայր գանգվածի հետ և հոգևոր իմաստով՝ Ս. էջմիածնի հետ, որովհետև, սիրելի՛ ժողովուրդ, անշուշտ, որ երբ Մենք և դուք Ս. էջմիածին կրսենք, ասնե բանե առաջ կնասկնանք Ս. էջմիածինը իբրև հոգևոր հաստատություն, իբրև մեր հավատքի կեդրոն, և մեր հոգևոր միությունը ապահովող իսկապես ասավածային ուժ, որ տվելի քան 1600 տարիներե ի վեր կա, և հետզհետե ավելի կամրանա կարծեմ։ Բայց գիտենք նաև, թե Ս. էջմիածինը անբաժան մասը կկազմե Հայաստանի սրբացած հողին և այդ Ս. էջմիածինը իր հիմքերը ամուր կերպով հաստատած է Հայաստանի ապառաժներուն վրա։ Հիշտ այդ պատճառով է, որ ան ամուր կերպով իր հիմքերը հաստատած է նաև հայ ժողովուրդի հոգիին մեջ։

Մենք այս միտքը ուրիշ բառերով երեկ իրիկուն ալ արտահայտեցինք, և նորեն կուգենք կրկնել և միշտ պիտի ընդգծենք, որովհետև մեր քրիստոնեական հավատքը անհայրենիք չէ։ Մեր եկեղեցին Ազգային եկեղեցի է. մեր եկեղեցվո սահմանները կտարածվին մինչև այնտեղ, ուր կտարածվի հայ ժողովուրդը և այդ սահմանները անդին չենք ալ անցնիր և չենք ալ ուզեր անցնիլ։

Այսպիսին է մեր եկեղեցին. 1600 տարիներե ավելի է, որ այսպես ապրեր ենք մենք։ Այս կացությունը մենք չենք կրնար փոխել, ո՛չ մենք ենք ստեղծած այս կացությունը, ո՛չ Մեր նախորդ կաթողիկոսները, այլ մեր ամբողջ պատմությունը։ Ամբողջ մեր պատմությամբ նվիրագործված կացություն մը է, միասակ մը է, հոգեկան անաստարարուածելի կառույց մը, որ հայ ժողովուրդը կկապե իր եկեղեցիին, իր հավիտենական կեդրոն Ս. էջմիածնին։

Մեր եկեղեցիին հիմքին մեջ, մեր եկեղեցիին գոյության իմաստին մեջ և հոգիին մեջ կա նաև մեր ազգային ոգին և մեր հայրենիքի ոգին։ Պատահական չէ, որ Հայ եկեղեցին փաստորեն կկոչվի ոչ թե Հայ եկեղեցի, այլ՝ Հայաստանյայց եկեղեցի։ Հայաստանյայց եկեղեցի կնշանակե Հայաստանցիներու եկեղեցի. հետևաբար, մեր եկեղեցիով մեր ժողովուրդի բոլոր զավակները, անկախ այն հանգամանքեն, թե աշխարհի վրա ուր կգտնվին, հոգևոր իմաստով, Հայաստանի քաղաքացիներ են, հայաստանցիներ են։

Այս հանգամանքը բացառիկ նշանակություն մը ունի և պատմական խոշոր իմաստ ունի, մանավանդ այսօրվան ի սիյոնս աշխարհի ցրված մեր ժողովուրդի կյանքի պայմաններուն մեջ:

Կմնա մեզի, որ գիտակցինք և իրական փաստականությամբ, անկախ այլևայլ նկատումներե, ամեն բանե վեր դասենք հայ ժողովուրդի հոգևոր միությունը, եկեղեցիով, Ս. Էջմիածնով, մեր եկիրապետական մյուս Աթոռներով և մեր եկեղեցական բոլոր կեդրոններով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այսօր իր պատմական առաքելության նանապարհով կընթանա ուղիղ գծով, նվիրված մեր ժողովուրդի հոգևոր կյանքի շինության, ինչպես նաև ազգային շինարարական աշխատանքներու, որոնք, կխորհինք, թե ծանոթ են ձեզի:

Մեր գործունեության հիմնական կողմերեն մեկն է նաև հոգևոր կապի պահպանումը Մայր Հայրենիքի և արտասահմանի հայության, արտասահմանի հայ եկեղեցիներու միջև: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին հետ մեր ոգեշունչ գործակցությունն ետոր, մենք ավելի զիտակցաբար լավ պետք է հասկնանք և այդ կապը ավելի ամրացնենք, որպեսզի թե՛ Ս. Էջմիածինը զորանա և թե՛ Աթիլիասը զորանա և մեր բոլոր եկեղեցիները զորանան արտասահմանի մեջ, որովհետև այդ կապով է, որ մենք, մեր ամբողջ ժողովուրդը մեկ և անբաժան և անսասանելի պիտի պահպանենք մեր հավատքին և մեր ազգային զգացումներուն մեջ, այդ ձևով, կխորհինք, թե Էջմիածինը իր պատմական առաքելությունը առավել արդյունավորությամբ պիտի կարենա շարունակել:

Մեր գործունեության մեկ տարբեր երեսը կհանդիսանա Մեր մասնակցությունը այն աշխատանքին, որ ամբողջ աշխարհի մեջ կտարվի աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության նշանաբանով: Խաղաղությունը գաղափար մըն է, որ ամեն բանե առաջ քրիստոնեական է: Մենք այն ներքին գիտակցությունը ունինք, թե քրիստոնեությունը իսկապես և ամեն բանե վեր, սիրո և խաղաղության առաքելություն մըն է, մարդկային կյանքին մեջ: Խաղաղությունը լոկ խոսք չէ, ոչ ալ սովորական իմաստով վերացական գաղափար, ոչ ալ փիլիսոփայություն, որուն շուրջ մարդիկ կրնան տարբեր կարծիքներ ունենալ:

Խաղաղության զգացումը մեր Տիրոջը՝ Հիսուսի կյանքին, մտածողության հիմքը կազմած է. խաղաղություն քարոզել մարդոց, ժողովուրդներուն, ամբոխներուն, որպեսզի մարդը ավելի ձերբազատվի կիրքերե, հոգի, ներքին մղումներե, որպեսզի մարդիկ իսկապես ըլլան բարի, առատիրի և սիրեն զիրար: Հիսուս ըսած է. «Նույնիսկ թշնամիդ սիրե»: Ոչ թե բարությունը և սիրո և խաղաղության զգացումը այս բարձունքին չէ հասցուցած: Անա թե ինչո՞ւ պետք է ընդգծել, թե խաղաղության գաղափարը և զգացումը ամեն բանե առաջ և ամեն բանե վեր քրիստոնեական է: Եվ ազոր համար է, որ Հիսուս երանի կոչեց բոլոր անոնց, որոնք իրենց կյանքին մեջ և իրենց շուրջ խաղաղություն կսերմանեն: Անա թե ինչո՞ւ մենք չէինք կրնար իրեն քրիստոնյաներ ճեռու մնալ խաղաղության համար տարված աշխատանքներե, որուն, պետք է ավելցնենք, ամենայն անկեղծությամբ և հաստատակությամբ, թե խաղաղության իրականացումը աշխարհի վրա, խաղաղության ապահովումը և պատերազմներու կանխումը կբխի նաև մեր փոքրիկ և անցյալի մեջ բազում անգամներ տառապած և նահատակված հայ ժողովուրդի խղճեն, գիտակցությունեն, անոր գերագույն շահերեն:

Սիրելիներ՝ մանավանդ պետք է Հայաստանի մեջ ապրիլ, հայաստանցի ըլլալ, որպեսզի կարենաք կշռել կարևորությունը այս մտածումին: Մեր ժողովուրդը, նույնիսկ առանց պատմությունը կարդացած ըլլալու, պարզ, հասարակ գյուղացին բնազդով կզգա, գիտե, թե ի՞նչ ձյուն բերած է հայ ժողովուրդի գլխուն պատերազմ կոչված արհավիրքը: Անցած ուրիշները պատերազմած են և մենք ենք վնասված, մենք ենք տուժած, մենք ենք նահատակված, անմեղ կերպով, անարդար կերպով: Գիտեք դուք այդ բոլորը:

Այս վերջին պատերազմին, հայաստանցիները կպատմեն, թե ի՞նչպես իրենց սրտերը աշնան տերևի պես կդողային, թե կրնա «ֆրոնտ»-ը խորտակվիլ Վոլգայի ափերուն. և եթե այդ «ֆրոնտ»-ը խորտակվեր, պատրաստ էր թշնամին Արաքսի մյուս ափեն հարձակելու, բնաջնջելու համար նաև մեր այսօրվան հայ ժողովուրդը: Այս է իրականությունը և միշտ այդպիսի վտանգներ կրնան ըլլալ:

Հայ ժողովուրդի կյանքի գերագույն շահերը լավ հասկնալու, լավ ըմբռնելու համար, չի բավեր վերացական մտածումներով կամ զգացումներով առաջադրվիլ, պետք է միշտ ուղիղ կերպով դիտենք քարտեզը և տեսնենք, թե ուր կգտնվի Հայաստան՝ իր աշխարհագրական դիրքով:

Հայաստանցին այս զգացումը ունի, և բոլոր հայերը, կկարծենք, պետք է ճիշտ հասկրնան, լավ հասկնան մեր ժողովուրդի կյանքի իրական պայմանները և շահերը, և ըստ այնմ ղեկավարեն մեր կյանքը, ըստ այնմ ուղղություն տան մեր ցանկություններուն և իղձերուն, իրատես կերպով, իսկապես ճշմարիտ հայրենասիրությամբ և ազգասիրությամբ:

Մենք կխոստովանինք, թե մեզի համար, մանավանդ մեզի պես փոքրիկ ժողովուրդի մը համար, աշխարհի խաղաղությունը կենաց և մահու հարց է: Մենք չենք ուզեր պատերազմ ոչ մեկ գնով և միշտ պիտի է աղօթող մնանք, որ աշխարհի մեջ խաղաղությունը տիրե, և ժողովուրդներու միջև նշմարիտ, անկեղծ բարեկամություն և գործակցություն:

Մենք կխոստովանինք, թե մեր ժողովուրդի բոլոր իղձերու իրականացման նշմարիտ ճանապարհը խաղաղության ճանապարհն է: Գիտենք, այլևայլ հարցումներ ծնունդ կառնեն մեր խիղճերուն մեջ, և արդար իղձեր կան, իրոք արդար, բայց այդ բոլորը, նորեն, Մենք կհավատանք, որ խաղաղ ճանապարհով պիտի լուծվին, ժամանակի ընթացքին:

Այլապես կրնանք եղածն ալ կորսնցնել:

Պիտենք, որ ընկալված իմաստով կաթողիկոսական խոսքի մը սահմաններեն անդին անցանք, բայց ինչպես ըսինք, արդեն Մենք ալ հայաստանցի ենք 7—8 տարիներէ ի վեր: Եվ եթե այսպես կխոսինք, ոչ միայն Մեր խղճի ձայնն է որ կուգա ձեզի, այլ Մեր միջոցով խղճի խոսքը մեր ամբողջ ժողովուրդին: Ահա թե ինչո՞ւ Մենք միշտ պիտի մնանք աղօթող «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»:

Տա՜ Աստված, որ ամեն տեղ հոգիները խաղաղին և մարդոց և ժողովուրդներու մեջ հարաբերությունները բարելավվին, մարդիկ և ժողովուրդներ զիրար լավ ճանչնան, զիրար լավ հասկնան, արդարություն ընեն իրարու և այսպիսով, խաղաղությամբ և արդարությամբ, մարդկությունը հասնի երջանկության ափին:

Սաղմոսերգուն կրսե. «Երանի՜ այն վիճակին, երբ խաղաղություն և արդարություն պիտի համբուրվին մեկը մյուսին հետ»: Մենք կուզենք հավատալ, որ այս քրիստոնեական և համամարդկային գերագույն իդեալը վերջի վերջո կիրականանա, ի շահ բոլորին և հերջանկություն բոլորին: Եվ, ինչպես կբարոզեն խաղաղության կողմնակիցները, արդեն մարդկությունը կյանքի ուրիշ հանապարհ չունի այսուհետև, ատոմական այս անավոր ռումբերու ստեղծումեն հետո:

Եվ մենք ուրախ ենք, որ մեծ պետությունները ևս այսօր սկսած են այս ուղղությամբ մտածել. պետական մեծ մարդիկ, հսկա պետություններու ղեկավարներ, կողմ-կողմի կուգան, դաշինքներ կստորագրեն այս ոգիով:

Մենք կաղօթենք, որ Տերը զորավիգ ըլլա այս խաղաղասեր մեծ մարդոց և անոնք իրենց գերագույն նիգերը լարեն՝ ժողովուրդները ազատելու համար ապագա պատերազմներու անավոր մղձավանջեն: Այս աղօթքը կնկատենք Մեր սրբազան պարտականությունը, իբրև Հայ եկեղեցվո Պետ և իբրև հայ հավատացյալ ժողովուրդի խղճին ու մտածումին հերկայացուցիչը:

Մենք կզգանք, թե Մեր գործունեության հանապարհին վրա, մեր ամբողջ ժողովուրդը Մեզի հետ է, և որ մեր ամբողջ ժողովուրդը Մեզի այս ուղղությունը ցույց կուտա և աղոթքի մեջ Մենք կգտնենք և՛ մխիթարություն, և՛ նորանոր ուժեր. և լավատես ենք, թե հետզհետե մեր նկեղեցվո կյանքի պայմանները առավել պիտի բարվոքվին, Ս. Էջմիածինը ավելի՛ պիտի հզորանա, իր առաքելությունը ավելի՛ արդյունավետությամբ պիտի շարունակե, իր բոլոր գործակիցներուն հետ մեկտեղ, մանավանդ իրև գործակից ունենալով Մեծի Տանն Կիլիկիո պատմական Աթոռը և մեր եպիսկոպական Աթոռները:

Թող Աստված օրհնե մեր Ս. նկեղեցին, մեր ժողովուրդը և մեր աշխատանքը, և հաջողությամբ պսակե մեր բոլոր ազնիվ և եկեղեցաշեն ծրագիրները: Ամեն»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՒՄ Է ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ 40 ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 7-ին, Քիգչարքի, երեկոյան ժամը 9-ին, Կահիրեի եգիպտացի հարտարապետների ակումբում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում Եգիպտոսի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի ազգային, վարչական, կրթական գործունեության 40-ամյա հոբելյանը։

Հանդիսության ներկա են լինում Կահիրեի հարանվանությունների պետեր, ազգային-եկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչներ, թիթակիցներ։

Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Զավեն վարդապետը ներկայացնում է հոբելյար սրբազանի կենսագրությունը, կյանքն ու գործունեությունը։

Կահիրեի հայոց քաղաքական ժողովի ատենապետ պր. Օննիկ Մայլանը խոսում է Մամբրե սրբազանի Եգիպտոսի առաջնորդության շրջանի եկեղեցական, կրթական գործունեության, շինարարությունների և այլ իրագործումների մասին։

Հոբելյար սրբազանին ողջունում են նաև վերապատվելի Վանան Թուրիկյանը և Հ. Բարսեղ Ֆերհատյանը, իրենց համայնքների անունից։

Հանդիսությունը անցնում է խանդավառ մթնոլորտում։ Այս առթիվ, ազգային իշխանությունների անունից հոբելյար սրբազանին նվիրվում է ոսկե մի լանջախաչ։

Ապա խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետը, որ հուշերով համեմված իր ելույթը, իբրև Հայ եկեղեցվո Պետ և իբրև հայ հավատացյալ ժողովուրդի խղճին ու մտածումին հերկայացուցիչը։

Մենք կզգանք, թե Մեր գործունեության հանապարհին վրա, մեր ամբողջ ժողովուրդը Մեզի հետ է, և որ մեր ամբողջ ժողովուրդը Մեզի այս ուղղությունը ցույց կուտա և աղոթքի մեջ Մենք կգտնենք և՛ մխիթարություն, և՛ նորանոր ուժեր. և լավատես ենք, թե հետզհետե մեր նկեղեցվո կյանքի պայմանները առավել պիտի բարվոքվին, Ս. Էջմիածինը ավելի՛ պիտի հզորանա, իր առաքելությունը ավելի՛ արդյունավետությամբ պիտի շարունակե, իր բոլոր գործակիցներուն հետ մեկտեղ, մանավանդ իրև գործակից ունենալով Մեծի Տանն Կիլիկիո պատմական Աթոռը և մեր եպիսկոպական Աթոռները։

Թող Աստված օրհնե մեր Ս. նկեղեցին, մեր ժողովուրդը և մեր աշխատանքը, և հաջողությամբ պսակե մեր բոլոր ազնիվ և եկեղեցաշեն ծրագիրները։ Ամեն»։

Վեհափառ Հայրապետը իր շքախմբի անդամների ՝ետ

թից հետո, Մամբրե սրբազանին նվիրում է ձեռաց մի խաչ ասելով.

«Սրբազա՛ն, առեք այս խաչը իբր հիշատակ և Ս. Էջմիածնի խաչով օրհնեցեք Ձեր ժողովուրդը»:

Վերջում խոսք է առնում նաև հոբելյար Մամբրե սրբազանը և իր շնորհակալությունն է հայտնում եգիպտահայ ազգային-եկեղեցական իշխանություններին՝ իր հոբելյանը նշելու առթիվ և երախտագիտությունը Վեհափառ Հայրապետին, որ բարեհաճել էր նախագահելու սույն հանդիսության։

Երեկոն վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ

Նոյեմբերի 8-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 5-ին, գնացքով, Վեհափառ Հայրապետը Կահիրեից ժամանում է Ալեքսանդրիա, ուղեկցությամբ իր շքախմբի անդամների, առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի և ազգային իշխանությունների ներկայացուցիչների։

Ալեքսանդրիայի քաղաքային կայարանում Նորին Ս. Օծությանը շերմորեն դիմավորում են առաջնորդական փոխանորդ Տ. Զավեն վարդապետ Զինչինյանը, թեմական ժողովի ատենապետ պր. Մարտիկ Զարբհանելյանը, ազգային իշխանության և կազմակերպությունների ներկայացուցիչներ, հոգևորականներ, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ և խուռներամ բազմություն։

Այնուհետև, Հայոց Հայրապետը հանդիսավորությամբ առաջնորդվում է Ալեքսանդրիայի հայոց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով և տալիս է իր ողջույններն ու օրհնությունները։

Ապա Նորին Ս. Օծությունը առաջնորդվում է հյուրանոց։

Երեկոյան ժամը 9-ին, թեմական ժողովի ատենապետ պր. Մարտիկ Զարբհանելյանը

Վեհափառ Հայրապետին և շքախմբի անդամներին իր ընտանեկան հարկի տակ ողջունելու և հյուրասիրելու ուրախություն է ունենում։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՑՑԵԼՈՒՄ Է ՊՈՂՈՍՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Նոյեմբերի 9-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Ալեքսանդրիայի հայոց Պողոսյան ազգային վարժարանը, ուր ընդունվում է տնօրինության, ուսուցչական կազմի և աշակերտության կողմից հուզումնախառն ծափերով։

Այս բարեբաստիկ առիթով Նորին Ս. Օծության պատվին կազմակերպվում է դպրոցական հանդիսություն։

Ի դիմաց Պողոսյան ազգային վարժարանի աշակերտության, ավարտական դասարանի ուսանող Գեորգ Տիենկիլյանը ընթերցում է հետևյալ ողջերգը.

«Վեհափա՛ռ Հայրապետ.՝

Աղեքսանդրիո Պողոսյան ազգային վարժարանի սաներս և սանուհիներս, խոնարհաբար կուգանք մեր շնորհակալությունները հայտնել, որ բարեհաճեցաք մեր կրթական հաստատությունն այցելել՝ Ձերդ Վեհափառության օրհնարեր շնորհները մեզ բաշխելու և մեզ օրհնելու համար։

Դո՛ւք, Վեհափա՛ռ Հայրապետ, Ձեր ներկայությամբ նոր թափ, նոր ուժգնություն կհաղորդեք մեր հայրենատենչ զգացումներուն, որոնք լույսեն ավելի արագ կթռչին այս պահուս, կփոխադրեն մեզ դեպի մեր պանծալի հայրենիքը, որուն երկնակամարին վրա վառ ու առկախ կմնան էջմիածնի ջահն ու Սասունցի Դավթի սուրը։

Մեր մեծագույն փափագն է՝ օր մը ակնածանքով խոնարհիլ, ծնկալոր աղոթել Ս. Էջմիածնի կամարներուն տակ, շնչել հայրենի կենսոնակ, կազդուրիչ օդը և ապրիլ Ձերդ Վեհափառության հովանիին ներքև։

Մենք՝ Պողոսյան ազգային վարժարանի սաներս և սանուհիներս, այս հանդիսավոր պահեն օգտվելով, մեր ձայնը կմիացնենք ուրիշ հազարավոր ձայներու և կաղաղակենք. Կեցցե՛ և բարգավաճի՛ մեր սիրելի հայրենիքը՝ իր լուսափայլ ու ներշնչող Գահակալով։»

Ալեքսանդրիայի հայոց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Գեորգ քահանա Սեմերճյանը, հանուն հոգևոր դասի, ընթերցում է մի գեղեցիկ ողջերգ։

Հանդիսությունը ընթացքում կատարվում են նաև խմբերգեր և արտասանություններ։

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, իր անհուն խանդաղատանքի խոսքն է ուղղում մատաղ սերնդին և հորդորում է սիրել լույսի խորան Ս. Էջմիածինը, մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, մեր լեզուն, մեր դրականությունն ու մշակույթը։

Աշակերտության և ուսուցչական կազմի բարեխոսությամբ ծափահարությունների մեջ Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում կրթական այս օրինակելի հաստատությունից։

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է իր այցելությամբ պատվել պր. Ներսես Թոփուզյանի ընտանեկան օջախը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը։

Ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Ալեքսանդրիայի հունա-հռոմեական թանգարանը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՌԱՋԴԻՄԱՍԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ

Նոյեմբերի 9-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է այցելել Հառաջդիմասեր մշակութային ընկերակցության սրահը, իր շքախմբի անդամների, առաջնորդ սրբազանի, հոգևորականության և կահիրեի ու Ալեքսանդրիայի ազգային իշխանությանց ներկայացուցիչների ուղեկցությամբ։

Այս ուրախ առիթով. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպվել էր թե՛ գրական-գեղարվեստական երեկույթ և թե՛ մատնավոր ընդունելություն։

Հանդիսության գեղարվեստական բաժինը գործադրվում է Հառաջդիմասեր ընկերակցության տան վրանածածկ ընդարձակ այգում, խուռներամ ժողովրդի ներկայությամբ։

Հանդիսության բացումը կատարում է պր. Խաչիկ Հակոբյանը։ Ապա Վեհափառ Հայրապետի օրհնարեր ներկայությունը ողջունում է պր. Է. Հեֆիմյանը, որն անդրադառնում է հոկտեմբեր 26-ի պատմական հանդիպման համազգային նշանակության։ Այնուհետև գործադրվում է գեղարվեստական մի հայտագիր՝ երգից, նվագից և արտասանություններից բաղկացած։

Ապա բեմ է հրավիրվում Վեհափառ Հայրապետը, որն «այլևս ծանոթ դարձած իր հայրական քաղցր ու գրավիչ ժպիտով սկսավ իր խոսքը, հատկապես հայ ժողովուրդի կարողությանց և կամքին մասին։ Վեհափառ Հայրապետը իր գեղեցիկ խոսքերը համեմեց այնքան հետաքրքիր հիշատակներով» («Հուսաբեր», 11 նոյեմբերի)։

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։ Ապա Նորին Ս. Օծությունը առաջնորդվում է պատվո սեղանը։

Երեկոյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը օրհնում է պր. Գեորգ Գայարյանի սեղանը, ուր Իր պատվին կազմակերպվել էր ընդունելություն։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 10-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Ալեքսանդրիայի հայոց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ։

Սուրբ պատարագի երգեցողությունները տեղի են ունենում օրվան վայել վեհությամբ և ներդաշնակությամբ, եկեղեցու «լուսավորիչ» դպրաց դասի կողմից, արժանապատիվ Տ. Ղևոնդ քահանա Փափազյանի ղեկավարությամբ։

Սուրբ պատարագին ներկա է լինում օտար կրոնական համայնքների, Կահիրեի և տեղի ազգային իշխանությանց ներկայացուցիչների և հավատացյալների մեծ բազմություն։

«Հայր Մերս»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ընդազանգ լերուք միմեանց երկիւղիւ Տեառն» բնաբանով և կոչ է անում, որպես Հայ եկեղեցու զավակներ, միմյանց կապված լինել քրիստոնեական եղբայրության ոգով և փոխադարձ սիրով։

Նորին Ս. Օծությունը Իր գոհունակությունն է հայտնում Ալեքսանդրիայի հայության եկեղեցական և հայրենասիրական ոգու համար, հոգևորական և աշխարհական ղեկավարների ստանձնած և կատարած բարեխիղճ պարտականությունների համար հոգուտ եկեղեցուն և հայ համայնքին և Իր այցելության առթիվ որպես գնահատություն, առաջնորդական փոխանորդ Տ. Զավեն վարդապետ Ցինչինյանին շնորհում է վարդապետական, իսկ Տ. Ղևոնդ քահանա Փափազյանին և Տ. Գեորգ քահանա Սեմերջյանին՝ քահանայական լանջախաչ, առաջնորդ Տ. Մամբրե սրբազանի միջնորդությամբ։ Նորին Ս. Օծությունը եկեղեցուն էլ նվիրում է Ս. Մեռոնի քանդակազարդ մի աղավնի։

ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 10-ին, կիրակի, երեկոյան ժամը 7-ին, Ուինսսոր հյուրանոցում, Ալեքսանդրիայի ազգային-եկեղեցական իշխանությունները կազմակերպում են թեյասեղան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի։ Պատվո սեղանի առաջ, Նորին Ս. Օծության շուրջն էին շքախմբի անդամները, առաջնորդ սրբազանը, Տ. Զավեն վարդապետ Ցինչինյանը, թեմական խորհրդի ատենապետ պր. Մ. Զարբհանելյանը, թեմական և քաղաքական ժողովի անդամ պր. Կեսարյանը և այլ պաշտոնական անձնավորություններ, շուրջ 250 հոգի։

Ընդունելության ժամանակ խոսք են առնում Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, ճարտարապետ Միքայել Մազմանյանը, առաջնորդ Տ. Մամբրե սրբազանը և Վեհափառ Հայրապետի գավազանակիր Տ. Աբսեն վարդապետ Բերբերյանը։

Վերջում ելույթ է ունենում Վեհափառ Հայրապետը շեշտելով, որ սույն թեյասեղանով վերջանում է Իր այցելությունը Ալեքսանդրիա և մի քանի օր հետո էլ՝ Եգիպտոս, և Ինքը մեկնում է Եգիպտոսից լավագույն տպավորություններով և քաղցր հիշատակներով։

Վեհափառ Հայրապետի հրաժեշտի խոսքերը ընդհատվում էին հաճախ բուռն ծափահարություններով։

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և ներկաները բաժանվում են, «տանելով իրենց հոգիներուն մեջ պատմական հավերժալ օր մը ապրած ըլլալու քաղցր վայելքը» («Հուսաբեր», 12 նոյեմբերի)։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ

Երեկոյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Տիգրան Երկաթ հայ մշակութային միության սրահը և «ժողովուրդին անհատնում ծափահարության մեջ հառաջացավ մինչև պատվո պատվանդան» («Արև», 11 նոյեմբերի)։

Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը առաջինը ողջունում է պր. Գրիգոր Պաքմանյանը։ Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական մի հայտագիր, կազմված երգերից, նվագից և արտասանություններից։ Ընդունելության ժամանակ ելույթ է ունենում նաև ուսանողական մարմնի պարախումբը։

Ապա խոսք է առնում միության նախագահ պր. Միհրան Թոզաթլյանը և հանուն Տիգրան Երկաթ մշակութային միության, բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին, մի անգամ ևս «շեշտելով մեր հավատարմությունը Լուսո Խորան Ս. Էջմիածնին» («Արև», 11 նոյեմբերի)։

Այնուհետև ելույթ է ունենում Վեհափառ Հայրապետը, շեշտելով հայ մշակույթի կարևորությունը Սփյուռքի պայմանների մեջ, որպես ազգապահպանման մեծագույն ազդակ։ Վեհափառ Հայրապետը հանգամանորեն անդրադառնում է նաև Մայր Հայրենիքում հայ մշակույթի արձանագրած հիանալի նվաճումներին, հատկապես գրականության, երաժշտ-

տության և ճարտարապետության ընդգավառներում։

Ընդունելության վերջում Տիգրան Երկաթի վարչությունը Վեհափառ Հայրապետին է նվիրում Կոմիտաս վարդապետի բրոնզե մահադիմակը։

Իսկ Վեհափառ Հայրապետը Տիգրան Երկաթի սրահին է նվիրում Ս. Հռիփսիմեի մեկ ջրանցրկ նկարը։

Այս առթիվ, Վեհափառ Հայրապետը օրհնության կոնդակ է տալիս նաև Տիգրան Երկաթ մշակութային ընկերության նախագահ պր. Միհրան Թոզաթլյանին՝ նրա ազգանվեր գործունեության համար։

Հանդիսությունից հետո, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում ներկաներից։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԿԱՀԻՐԵ

Նոյեմբերի 11-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11.15-ին, Վեհափառ Հայրապետը Ալեքսանդրիայից գնացքով վերադառնում է Կահիրե, ուր հասնում է հետմիջօրեի ժամը 2-ին։

Նորին Ս. Օծությունը քաղաքային կայարանում դիմավորվում է ազգային իշխանությանց, կազմակերպությունների ներկայացուցիչների, Գալստյան և Նուպարյան ազգային վարժարանների ուսուցչական կազմի և ուսանողության կողմից։

Ջուլգ վարժարանների անունից, երկու աղջնակներ ծաղկեփունջ են ներկայացնում Նորին Ս. Օծության, որը ներկաների ծափահարությունների ներքո առաջնորդվում է դանդոկ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՍՐԱՀՈՒՄ

Նոյեմբերի 11-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 9-ին, հայկական ընթերցասրահում, Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպվում է ընդունելություն։

Նորին Ս. Օծության մուտքը սրահ ողջունվում է խանդավառ ծափերով և հոսանկայծ։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։

Ընդունելության ժամանակ պր. Հայկ Հովհաննիսյանը բաժակ է առաջարկում Հայոց Հայրապետի կենացը, «որ վերաշինեց Հայաստանի եկեղեցիները և երկար կյանք մաղթեց Նորին Վեհափառության, որպեսզի իր ձեռքով վերաշինե նաև Վարագն ու Աղթամարը» («Արև», 13 նոյեմբերի)։

Ճաշկերույթից հետո գործադրվում է գեղարվեստական մի հայտագիր։

Հայկական ընթերցասրահի նախագահ պր. Սարգիս Պալյանը ողջունում է Վեհափառ Հայրապետի ներշնչող ներկայությունը։ «Մերթ ընդ մերթ տեղի են ունենում երգ, խմբերգ, արտասանություն և պար։

Ընթերցասրահի վարչության անունից հանդես է գալիս պր. Եզեկիել Վեցիկյանը, որն ամփոփ կերպով ներկայացնում է միության գործունեությունը և հայրենասիրական գծով տարած աշխատանքը, շեշտելով, որ «Հայկական ընթերցասրահը ներգաղթը կենսատե հայրենասիրական գործ մը և հաճույքով կընդգծե, որ սրահեն ոչ ոք ցարդ մեկնած է օտար երկիր, այլ բոլոր մեկնողները ճամբա ելած են դեպի հայրենիք, դեպի Մայր Հայաստան» («Արև», 13 նոյեմբերի)։

Տիկին Վարդուհի Տատուրյանը, հանուն հայ մայրերի և կանանց, ողջունում է Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ներկայությունը հետևյալ ուղերձով.

«Վեհափա՛ռ Տեր.

Հայաստանյայց եկեղեցի, հայ լեզու, հայրենիք. այս երեքը սորվեցուցին մեզի սիրելի մեր ուսուցիչները, հավատք ներշնչեցին և մեզ դարձրեցին այնպես, որ մենք կարենանք ուժեղ օղակ մը ըլլալ անցյալին և գալիքին միջև։ Երբ խոսեցան մեր եկեղեցիին մեծության մասին, տվին փնտտեր, ճանչցուցին նարեկացին և Շնորհալին իրենց աղոթքներով և տաղերով ու մենք լավ ըմբռնեցինք, թե ի՞նչ նշանակություն ունի մեզի համար անդամ ըլլալ Հայ Առաքելական եկեղեցիին։ Հայ լեզվի ուսուցիչը խանդավառորեն մեզ առաջնորդեց մեր գրական մրգաստանը, ճաշակեցինք պտուղներ և հոն ճանչցանք Վարուժանն ու Զոհրապը, Դուրյանը և Սրվանձտյանցը, Զորյանը, Կապուտիկյանը և ուրիշներ։ Ազգային պատմության էջերը եթե երբեմն կտամկացնեին մեր այքերը, բայց շուտով կբարձրանային մեր գլուխները, երբ կլսեինք Մեծն Տիգրանի կայսրության մասին կամ Քաջն Վարդանի և իր նիզակակիցներուն հերոսության մասին։ Եվ այս ամենքով զորացած, մտանք կյանքի մեջ, մեր պապերեն մեզի հասած ժառանգը լավ պահելու վճռականությամբ։ Կմղենք պայքար մը։ Ի՞նչ է մեր պայքարը. «լինել թե չլինելը»-ը անհատական հարց չէ այլևս։ Շատ դյուրին է իբր մարդ գոյություն մը պահելը։ Ինչ որ շատ դժվար է, հավաքականորեն հայ մնալու հարցն է մեզ համար։

Ձեր օրհնաբեր գալուստը որքա՜ն բարիք բերավ մեզ բոլորիս, մանավանդ մեր մատաղ տղոց։ Այս վերջին քանի մը օրերուն, մեր զավակները սորվեցան շատ կարևոր բաներ և այնքան խոր տպավորված են, որ դժվար թե մոռնան։

Ձեր ժամանման օրն էր, Վեհափա՛ռ Տեր։ Երեք տարեկան մանչուկս ալ ուրախ մեզի ընկերացավ, օդանավակայան կերթայինք ի

վերջու Ժամբան հարցուց. «Ո՞վ պիտի գա, մամա» «Վեհափառ Վազգեն Կաթողիկոսը», պատասխանեցի ես։ Կես ժամ վերջ արդեն տեսած էր Ձերդ Վեհափառությունը և կկրկներ. «Մեր Վազգեն Կաթողիկոսն է, չէ՞»։

Այսօր իր յոթը տարեկան եղբարիկն ալ սորված է, որ Վեհափառը շատ բարի է, չէ՞ որ վարժարան այցելեց, խոսեցավ իրենց ու խաչ ալ նվիրեց։ Մեծը կարդաց արձանագրությունը և սորվեցուց պզտիկին «Ս. Էջմիածին» թոթովել։ Մեծը գիտե արդեն, թե Վեհափառը նկած է Էջմիածնեն, որ մեծ եկեղեցի մըն է Հայաստանի մեջ, Երևանին շատ մոտիկ։ Հպարտությամբ կըսե, որ օր մըն ալ ինք պիտի երթա հոն մոմ մը վառելու և պզտիկն ալ կկրկնե՝ «ես ալ»։

Մեղի ալ Ձեր օրինակով մեծագույն դասը տվիք՝ քրիստոնեական ներողամտության դասը։ Մոռցանք ատելություն ու ոխ։ Միություն և սեր տարածեցիք Ձեր շուրջը։ Տվիք խռոված հոգիներու խաղաղություն, որուն համար այնքան աղոթող են անխտիր բոլոր մայրերը այս աշխարհի, մանավանդ հայ մայրերը։

Բարի՛ եկաք, Վեհափա՛ռ Տեր։ Մենք, այժմ, պիտի կրնանք շարունակել հայապահպանումի մեր գործը խաղաղ հոգիով, նորոգված եռանդով, մինչև որ մեր ալ օրը գա ուխտի գալու Ս. Էջմիածին և հոն ալ առնելու Ձեր Սրբազան Աչքը։

Արաբագետ պր. Արամ Մուրադյանը ընթերցում է արաբերեն լեզվով Վեհափառ Հայրապետին ձոնված երգը։

Նորին Ս. Օծության ներկայությունը ողջունում են նաև պարոնայք Էդվարդ Հակոբյանը, Սիսակ Շալեյանը, Հայկ Ժամկոչյանը և ուրիշներ։

Վերջում խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը, Իր ուրախությունն է հայտնում հայկական ընթերցասրահի կողմից կազմակերպված այս ջերմ և հաճելի ընդունելության համար։ Խոսում է հայրենադարձության հայրենասիրական նշանակության մասին, հաջողություն է մաղթում ներգաղթողներին, որ իրենց քրտինքը միացնեն հայրենիքի իրենց հարազատների հայրենաշինական վսեմ աշխատանքներին և «Պահպանիչ»-ով փակում սույն գեղեցիկ հանդիսությունը։

ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 12-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկարաժնում, բարեհաճում է ընդունել արաբական թերթերի թղթակիցներին և պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին։

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Իր շնորհաբեր ներկայությամբ պատվում է պր. Զարեհ Սաքոյանի ընտանեկան օջախը, օրհնելով նրա սեղանի աղն ու հացը։

Երեկոյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Նիյր-Իստ ակումբը։

Նորին Ս. Օծությունը Իր շքախմբով և պաշտոնական ուղեկիցներով ընդունվում է ներկա բազմության կողմից երկարատև ծափերով։

Ակումբի առենապետ պր. Հովակիմ Սիրբեյանը բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին և ներկայացնում է Նիյր-Իստ ակումբի գործունեությունը։

Այստեղ ևս գործադրության է դրվում գեղարվեստական մի հայտագիր։

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի ողջույնները հաղորդելով, խոսում է Սփյուռքի պայմաններում ազգապահպանման, Հայ եկեղեցու առաքելության, հայ ժողովրդի միասնականության և վերածնված Մայր Հայրենիքի ոգեշնչող իրականության և շինարարության մասին։

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

ՀՐԱԺԵՇՏԻ ՊՏՂԱՍԵՂԱՆ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նոյեմբերի 13-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետի այցելության վերջին օրն է Կահիրեում։

Առավոտյան ժամերին Նորին Ս. Օծությունը զբաղվում է Հնդկաստան մեկնելու պատրաստությամբ և վերջին այցելություններով։

Երեկոյան, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, Գալստյան վարժարանի վրանածածկ բակում, եգիպտահայ ազգային-եկեղեցական իշխանությունները կազմակերպել են հրաժեշտի պտղասեղան։

Որոշյալ ժամին հասնում է Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով և տեղ է դրվում պատվո սեղանի կենտրոնում, շրջապատված պաշտոնական անձնավորություններով։ Հարյուրավոր հրավիրյալներ արդեն տեղ են գրավել սեղանների շուրջ, ուր ստեղծվում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտ։

Հրաժեշտի սույն ընդունելությունը ղեկավարում է թեմական առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը։ Գեղարվեստական հայտագրին զուգընթաց, խոսք են առնում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, ճարտարապետ Միքայել Մազմանյանը, գավազանակիր Տ. Առսեն վարդապետ Թերբերյանը և ուրիշներ։

Վեհափառ Հայրապետը Ալեքսանդրիայի Պողոսյան ազգային վարժարանում

Ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ, խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետը, որ նախ Իր գոհունակությունն է հայտնում Կահիրեի և Ալեքսանդրիայի մեր համայնքների հոգևոր պետերին, ազգային-եկեղեցական իշխանությանց, մամուլին, զանազան կազմակերպություններին, սրահների վարչությանց՝ ջերմ հյուրասիրության և սրտագին դիմավորության համար։

Հայոց Հայրապետը Իր մասնավոր շնորհակալությունն է հայտնում Արաբական Միացյալ Հանրապետության բարեխնամ կառավարության, նրա Նախագահ Նորին Վսեմություն Կամալ Աբդել Նասերին՝ Իրեն և Իր շքախմբի անդամներին ցույց տրված բարյացակամ ուշադրության և ընծայված հարգանքի համար։

Իր հրաժեշտի խոսքում, Վեհափառ Հայրապետը անդրադառնում է նաև Երուսաղեմում հոկտեմբերի 26-ին Նորին Ա Կաթողիկոսի հետ Իր ունեցած հանդիպման և ողջագուրման նշանակությանն ու այժմեականությանը.

«Մեր այցելությունը Եգիպտոս տեղի ունեցավ Երուսաղեմի 26 հոկտեմբերի ողջագուրումի և Հայ Եկեղեցվո միասնության լույսին տակ։ Այստեղ, ձեր Եգիպտահայ ճամբլն հայ ճավատացյալ ժողովուրդի ծոցին մեջ, Մեր հոգիին մեջ, Մեր գիտակցության մեջ առավել պայծառացավ բախտորոշ և նվիրական նշանակությունը Մեծի Տանն Կիլիկիո շնորհազարդ Գորեն Կաթողիկոսի հետ Մեր հանդիպումին։

Հայաստանյայց Եկեղեցին դարձավ մեկ և անբաժան, ինչպես ան եղած է դարեր շարունակ, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կամարներուն տակ ճառագայթող Լուսավորչի անմար կանթեղի շողակաթումի ներքև։

Հայաստանյայց Եկեղեցին, իր բոլոր նվիրապետական Աթոռներով և համայն հայ հավատացյալ ժողովուրդով, մեկ է և անբաժանելի և այդպես ալ պետք է մնա հավիտյան, Ս. Էջմիածնի ասոված ային օրհնության և շնորհներուն ներքև։ Երբ կենիշնք այս նրշմարտությունները, պետք է շեշտենք, թե խոսքը չի վերաբերիր Վագգեն կամ Գորեն Կաթողիկոսներուն, կամ այս կամ այն մեր նվիրապետական Աթոռներեն մեկուն կամ մյուսին և կամ այլևայլ անցողական պարագաներու։

Խոսքը կվերաբերի մոտ երկնազարամյա մեր քրիստոնեական կեդրոն Ս. Էջմիածնեն, որ զմեզ միավորող և մեր լույս հավատքի

Վեհափառ Հայրապետը Ալեքսանդրիայում. աշակերտության հետ:

վավերականությունը ապահովող գերագույն ոգեկան ուժն է այս աշխարհի վրա:

Այնտեղ, Ս. Էջմիածնի, Արարատյան դաշտի վրա, իջավ մեր Փրկիչը Հիսուս, Ս. Գրիգոր Լուսավորչի լուսաշող տեսիլքով:

Այդ պատմական մեծ եղելությունը լույսով լեցուց Հայաստան աշխարհը, փայլատակեց հայ ժողովուրդի ճոգին: Պայծառակերպվեցավ մեր ազգը իմացապես, բարոյապես և ոգեպես:

Այնտեղ, Ս. Էջմիածնի նույն կամարներուն տակ, Ս. Մեսրոպ և Ս. Սահակ Ճորինեցին և մեր ժողովուրդին ընծայեցին հայ այբուբենը և Ս. Գիրքը:

Այնտեղ, Ս. Էջմիածնեն է, որ շողաց Քաջն Վարդանի սուրը՝ վասն Հիսուսի և վասն հայրենեաց:

Եվ միշտ այնտեղ, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, դարեր շարունակ անշեջ պահպանվեցավ հայ մշակույթի և հայրենասիրության սրբազան հուրը և բազում մեծ հայրապետներ փառքի էջեր առնանագրեցին հայոց պատմության գրքի մեջ:

Ս. Էջմիածնի հիմքերը հաստատված են հայոց Մայր երկրի ապառաժներուն վրա և հայ ժողովուրդի ճոգիներուն մեջ:

Ս. Էջմիածնի հոգևոր և ազգային առաքելությունը այսօր ալ պայծառ իրողություն մրն է: Այդ առաքելությունը պետք է շարունակվի և պիտի շարունակվի և առավել ամրապնդվի, և առավել ամբողջական դառնա աճ մանավանդ մեր օրերուն, երբ Սփյուռքի Մեր գավակները, իրենց հոգևոր-ազգային գոյությունը կենդանի պահելու համար, կենսատու օդի և ջուրի շափ կարիքը ունին իրենց պապական շրթները մերձեցնելու և անմահության ջուրեն խմելու, Ս. Էջմիածնի և վերածնած հայրենի աշխարհի կենարար զուլալ ակերեն:

Ս. Էջմիածինը հայայն մեր ժողովուրդինն է, որ բոլորին անխտիր, հավասարապես կրաշխվի իբրև լույս, իբրև ջուր, իբրև հաց կենաց: Աշխարհի բոլոր հանապարհներուն վրա սփռված հայ ազգին բոլոր գավակները, բոլոր հայ եկեղեցիները, Ս. Էջմիածնի աստվածային օրհնության ներքև կգտնվին այժմ և հավիտյան:

Երուսաղեմի 26 հոկտեմբերի ողջագուրումով, վերջ գտավ այն անբնական կացությունը, այն անցողական կացությունը, որ մեր եկեղեցին պահ մը տագնապի ենթարկեց: Տագնապը վերջ գտավ մեկ ակնթարթի մեջ, վասնզի անբնական էր և անիմաստ, վասնզի բոլորս շատոնց կսպասեինք այդ վճռական պահուն:

Վերականգնված է այժմ և ամրացած միասնությունը մեր եկեղեցիին ներս: Մենք

և Խորեն Կաթողիկոս ուխտեցինք աչքի լույսի պես պահպանել այդ միությանն և սիրո ոգին, և առավել զորացնել զայն մեր ձեռաց գործերով:

Եկեղեցիքն նիրս կողմեր չկան այլևս, եկեղեցիին համար, մեզի համար կողմեր չկան այլևս: Հայոց Եկեղեցին մեկ է և անբաժան՝ իր բազմադարյան կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնով, ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությամբ և մեր Նվիրապետական մյուս Աթոռներով՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոսական պատմական Աթոռով, Երուսաղեմի առաքելական Ս. Աթոռով, Կոստանդնուպոլսո Աթոռով, ամեն մեկը իր իշխանության սահմաններով և պատմականորեն նվիրագործված իր իրավասություններով և հեղինակությամբ: Մայր Աթոռին կապը մեր մյուս Նվիրապետական Աթոռներու և թեմերու հետ զուտ կրոնական է, հոգևոր և բարոյական իմաստով, և փաստորեն վարչա-կազմակերպչական տեսակետեն բոլոր մեր Նվիրապետական Աթոռները և թեմերը կղեկավարվին իրենց նեռիին կանոնադրություններով, ժողովրդավարական սկզբունքներու հիման վրա, համաձայն պատկան պետության օրենսդրության տեղական պայմաններուն:

Վարչա-կազմակերպչական որոշ չափով ապակեդրոնացած այս իրադրության մեջ, Ամենայն Հայոց Հայրապետությունը, Ս. Էջմիածինը, իբրև պատմական նվիրական կեդրոն հայոց քրիստոնեական հավատքի և Եկեղեցիի, իր հոգևոր հեղինակությամբ ու իշխանությամբ, կապահովե և կկենսագործե Հայ Եկեղեցիին միությունը և հայ հավատացյալ ժողովուրդի հոգևոր-բարոյական միասնությունը:

Մեր ողջագուրումով Խորեն շնորհազարդ Կաթողիկոսի հետ, մեր Եկեղեցիին նեռիին տագնապը վերջ գտավ և Եկեղեցական կյանքը իր բնականոն հունին մեջ մտավ, Եկեղեցվո դարավոր կանոններու ավանդությանց լույսին տակ: Բնականոն և օրինական և ջերմապես եղբայրական փոխհարաբերությունները վերստին կյանքի կոչվեցան Մայր Աթոռին և Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև և այսպիսով միասնական, շինարար գործակցության մը հանապարհը բացվեցավ մեր առջև:

Վստահ ենք, թե ինչպես Մենք, նույնպես և Մեր եղբայրը՝ Խորեն Կաթողիկոս, արքուն կերպով պիտի հսկենք, որպեսզի հոկտեմբեր 26-ի ոգին ամրապես արմատանա մեր Եկեղեցական ու ազգային կյանքին նիրս և դառնա կենսաբեր ու պտղառատ: Մենք երկուքս և մեր մյուս Աթոռներու գահակալները, արքուն կերպով պիտի հսկենք, որպեսզի ոչ մեկ կողմնակի պարագա չթույլցնե այդ ոգին: Այդ ոչ միայն մեր՝ գահակալներուս ուխտն է և նվիրական իղձը, այլ նաև համայն մեր հավատացյալ ժողովուրդի աղոթքը և կամքը: Եվ Մենք կխոստանինք, որ եթե պատահի նույնիսկ, որ մենք՝ հոգևորականներս, տկարանանք պահ մը, մեր ժողովուրդը պիտի պարտադրե մեզի իր կամքը և պիտի շթույլատրե, որ մենք իրարմե բաժնվինք: Միասնության ոգին մենք վերջապես և ստուգապես ապահովված կտեսնենք:

Գիտենք, թե հարց ավողներ շատ կան, թե հապա ինչպե՞ս պիտի լուծվին առկախ մնացած հարցերը: Մեր պատասխանը հետևյալն է.

Մենք և Խորեն Կաթողիկոս համաձայն ենք, որ այդ հարցերը պիտի լուծենք մոտ ապագային փոխադարձ հասկացողությամբ, մեր Եկեղեցական կանոններու և ավանդությանց համաձայն, հաշվի առնելով նաև առարկայական որոշ արտաքին պայմաններ: Ավելի հշտելով և հստակելով Մեր միտքը, անմիջապես ըսենք, թե համաձայնություն գոյացած պետք է նկատել Մարսիլիոս պարագայի նկատմամբ, որ էջմիածնական թեմ է և մեր հայրապետական պատվիրակին՝ Սերովբե արքեպիսկոպոսին անկ է գրաղել և լուծել հոգևոր առաջնորդով մը օժտելու խնդիրը, եթե այդ անհրաժեշտ նկատվի Մեր կողմե:

Մենք ապահովությունը ունինք, թե Անթիլիասի կողմե հայտնված տրամադրությունը հոկտեմբեր 26-ենե առաջ, գործադրության չի դրվիր այժմ հոկտեմբեր 26-ենե հետո: Այս մասին Մենք ոչ մեկ կասկած ունինք:

Հունաստանի և Պարսկաստանի թեմերը Մենք կենկատենք անշուշտ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև, բայց ոչ մեկ առարկություն չունինք, որպեսզի այնտեղ պաշտոնավարեն և դեկավարեն թեմական առաջնորդներ, որոնք Կիլիկյան Աթոռի միաբաններ են: Այս հարցին մեջ ալ Խորեն Կաթողիկոս և Մենք համաձայնեցանք, որ հիշյալ թեմերու առաջնորդները իրենց հոգևոր և բարոյական կապը պահպանեն Մայր Աթոռին հետ և հետզհետե ամրացնեն զայն, Հայ Եկեղեցվո միասնության ոգիով:

Ինչ կվերաբերի Միացյալ Նահանգներու մեջ ստեղծված կացության, որ մեր օրերուն տարիներու տխուր պատմություն մը ունի, անշուշտ որ առայժմ պետք է մաղթենք, որ երկու բաժանյալ կողմերու փոխադարձ հարաբերությունները սկսին հետզհետե եղբայրական ու սիրալիր դալալ, մինչև երջանիկ օր մը, երբ Մենք և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը ժամանակը հասած նկատենք զանոնք վերամիավորելու՝ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև:

Եթե այլ հարցեր ալ ըլլան կամ հետագային հարուցվին, վստահ ենք, թե Սենք և Կիլիկյան Աթոռը պիտի կարողանանք բարեմտ լուծումներ գտնել՝ միասնության և սիրո ոգիով: Եվ հանձնարարելի է և հույժ փափագելի, որ մեր եկեղեցական ներքին հարցերու լուծման ճանապարհին, մանավանդ այս սկզբնական շրջանին, աջեն կամ ձախեն միջամտություններ չըլլային և թողուին, որ Մենք՝ նվիրապետական Աթոռներու պատասխանատու գլխակալներս, մեր մեջ լուծենք մեր եկեղեցական հարցերը եղբայրական սիրով, 26 հոկտեմբերի ողջագուրումի ոգիով: Հատկապես արտասահմանի հայ մամուլեն է, որ կսպասենք ողջամիտ ու շրջահայաց կեցվածք: Բոլորս պետք է ըլլանք լայնախոհ, համբերատար և հաստատապես լավատես:

Երբ երուսաղեմ էինք տակավին, Խորեն Կաթողիկոսի մեկնումեն քանի մը օր հետո, Մեզի հարցում մը ուղղեց բարեմիտ հայ եկեղեցաբեր երիտասարդ մը: Ան ըսավ. «Վեհափա՛ռ Տեր, պիտի հրամայեք անշուշտ, որ մեր կուսակցությունները այլևս վերջ տան իրենց վեճերուն և իրենց գործունեության, և չբաժնեն մեր ժողովուրդը կողմերու»:

Այս հարցումը Մենք կկարդանք շատերու դեմքերուն վրա, առավել կամ նվազ բարեմտությամբ:

Մեր պատասխանը այս հարցումին պիտի ըլլա հետևյալը.

1. Մեր ողջագուրումը Խորեն Կաթողիկոսի հետ վերջ դրավ եկեղեցական մեր կյանքի տագնապին և վերահաստատեց մեր ամբողջ եկեղեցիի ու ազգի միությունը՝ կրոնա-եկեղեցական իմաստով: Արտասահմանի մեջ, բոլոր համայնքներու մեջ, կխորհինք, թե այս ոգին պետք է տիրապետե, ազգային-եկեղեցական իշխանությանց հակակշռին և դեկավարության ներքև գտնվող բոլոր հաստատություններեն ներս, ինչպես են հայ կրթական և բարեսիրական և մշակութային հաստատությունները և միությունները, որոնք եկեղեցիներու կողքին կգործեն, եկեղեցվո հոգևոր իշխանությանց հովանիին տակ:

2. Մեր ողջագուրումը Խորեն Կաթողիկոսի հետ, անշուշտ որ անհրաժեշտ որևէ կապ չունի հայ հասարակական-գաղափարական հոսանքներու և քաղաքական կուսակցությանց գործունեության հետ: Այդ իմաստով և այդ ուղղությամբ Մենք որևէ հրաման չունինք և ոչ իսկ որևէ թելադրանք:

3. Այնուամենայնիվ, սակայն, պիտի կամենայինք իրմ մը հայտնել, թե սպասելի է և ցերմապես փափագելի, որ գաղափարական և կուսակցական տարակարծություններ Սիրիոյի հայ կյանքին մեջ, հետու մնային պայքարի ծայրահեղ արտահայտություններեն և պարփակվեին մտածումի հավասարակշռության, իրատեսության և հեռատեսության սահմաններու մեջ, իբրև ամուր և միակ հիմք ունենալով հայ ժողովուրդի տեսական ու հիմնական շահերը և իրավ հայրենասիրությունը:

Եկեղեցական և ազգային այսպիսի կյանքի պայմաններու մեջ, անտարակույս, Սիրիոյի հայությունը առավել հաջողությամբ պիտի կարողանա կազմակերպել այն սրբազան և փրկարար գործը, որ կկոչենք հայապահպանում: Ս. Էջմիածինը միշտ աղոթող պիտի մնա հայապահպանման նվիրական գործի լիակատար հաջողության համար:

Թող Աստված օրհնե մեր Եկեղեցին և մեր բոլոր նվիրապետական Աթոռները և համայն մեր հավատացյալ ժողովուրդը:

Թող Աստված օրհնե եգիպտահայ հավատավոր բոլոր Մեր զավակները: Թող շեն ու հաստատ մնան ձեր եկեղեցիները, ձեր կրթական հաստատությունները և մշակութային միությունները:

Թող խաղաղության և բարեկամության մեջ հավետ ապրի ու ծաղկի այս սքանչելի երկիրը՝ Եգիպտոս և անոր ազնիվ ու շարքաշ ժողովուրդը:

«Ողջ լիարտ, զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէջ: Ամէն»:

Ողջերթի հավաքույթից հետո, ժողովուրդը խուռներամ շտապում է Օգեոն կինոյի սրահը, ուր հիացումով դիտում է 1962 թվականին Էջմիածնում դումարված Ազգային-եկեղեցական ժողովի, մեռնեորհնության, եպիսկոպոսական ձեռնադրության և այլ հանդիսությանց նվիրված «Էջմիածին» դունավոր ֆիլմը։

Վեհափառ Հայրապետի Եգիպտոս այցելության օրերին, Գերագույն Հոգևոր Խորհրդի և նրա շքախմբի անդամ, Ճարտարապետ Միքայել Մաղմանյանը, թե՛ Կահիրեում և թե՛ Ալեքսանդրիայում, կարդում է երեք շահեկան դասախոսություններ՝ «Աղթամարի ճարտարապետությունը», «Լեոնարդո Դա Վինչի և Հայաստան» և «Հայաստանի արդի ճարտարապետությունը» թեմաների շուրջ, որոնք լսվում են բացառիկ հետաքրքրությամբ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԵԿՆՈՒՄ Է ՀՆԴԿԱՍՏԱՆ

Նոյեմբերի 14-ին, հինգշաբթի, «Տասնեքօր Իր բարձր ներկայությամբ եգիպտահայ դպրոցը եկեղեցական, ազգային և հոգեկան բացառիկ մթնոլորտի մը մեջ ապրեցնելէ ետք, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ անկէ» («Հուսաբեր», 14 նոյեմբերի), նոյեմբերի 14-ին, հինգշաբթի օր, երեկոյան ժամը 9.30-ին, էյր Ինդիա ընկերության ինքնաթիռով Հնդկաստան մեկնելու համար։